ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

Խորհրդի 93/13/ԵՏՀ հրահանգը եւ Եվրոպական պառլամենտի ու Խորհրդի 1999/44/ԵՀ հրահանգը փոփոխող եւ Խորհրդի 85/577/ԵՏՀ հրահանգը եւ Եվրոպական պառլամենտի ու Խորհրդի 97/7/ԵՀ հրահանգն ուժը կորցրած ճանաչող՝ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱՌԼԱՄԵՆՏԻ ԵՎ ԽՈՐՀՐԴԻ 2011 թվականի հոկտեմբերի 25-ի 2011/83/ԵՄ հրահանգ՝ սպառողների իրավունքների մասին (Եվրոպական տնտեսական տարածքին առնչվող տեքստ)

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱՌԼԱՄԵՆՏԸ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ,

հաշվի առնելով «Եվրոպական միության գործունեության մասին» պայմանագիրը եւ մասնավորապես՝ դրա 114-րդ հոդվածը,

հաշվի առնելով Եվրոպական հանձնաժողովից ստացված առաջարկը,

հաշվի առնելով Տնտեսական եւ սոցիալական հարցերով եվրոպական կոմիտեի եզրակացությունը [1],

հաշվի առնելով Տարածաշրջանային հարցերով կոմիտեի եզրակացությունը [2],

գործելով ընդունված օրենսդրական ընթացակարգին համապատասխան [3],

քանի որ՝

1) «Ձեռնարկության շենքից դուրս բանակցված պայմանագրերի առումով սպառողների պաշտպանության մասին» Խորհրդի 1985 թվականի դեկտեմբերի 20-ի 85/577/ԵՏՀ հրահանգով [4] եւ «Հեռակա պայմանագրերի հետ կապված հարցերում սպառողների պաշտպանության մասին»

[1] ՊՏ C 317, 23.12.2009թ.3, էջ 54:
[2] ՊՏ C 200, 25.8.2009թ., էջ 76:
[3] Եվրոպական պառլամենտի 2011 թվականի հունիսի 23-ի դիրքորոշում (Պաշտոնական տեղեկագրում դեռեւս չհրապարակված) եւ Խորհրդի 2011 թվականի հոկտեմբերի 10-ի որոշում:
[4] ՊՏ L 372, 31.12.1985թ., էջ 31:

Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 1997 թվականի մայիսի 20-ի 97/7/ԵՀ հրահանգով [5] սպառողների համար սահմանվում են մի շարք պայմանագրային իրավունքներ:

2) Այդ հրահանգները վերանայվել են նախկին փորձի լույսի ներքո՝ կիրառելի նորմերը պարզեցնելու եւ թարմացնելու, նորմերում առկա անհամապատասխանությունները վերացնելու եւ անցանկալի բացերը լրացնելու նպատակով: Այդ վերանայման արդյունքում պարզվել է, որ նպատակահարմար է այդ երկու հրահանգները փոխարինել մեկ միասնական հրահանգով: Ուստի սույն հրահանգով պետք է սահմանվեն ստանդարտ նորմեր՝ հեռակա եւ շենքից դուրս կնքված պայմանագրերի ընդհանուր հայեցակետերի համար՝ հեռանալով նախկին հրահանգներով որդեգրված նվազագույն ներդաշնակեցման մոտեցումից, միեւնույն ժամանակ հնարավորություն ընձեռելով անդամ պետություններին որոշ հայեցակետերի մասով ունենալ կամ ընդունել ազգային նորմեր:

3) «Եվրոպական միության գործունեության մասին» պայմանագրի (ԵՄԳՊ) 169-րդ հոդվածի 1-ին կետով եւ 169-րդ հոդվածի 1-ին կետի «ա» ենթակետով նախատեսված է, որ Միությունն այդ պայմանագրի 114-րդ հոդվածի համաձայն ձեռնարկված միջոցառումների միջոցով պետք է նպաստի սպառողի պաշտպանության բարձր մակարդակի ապահովմանը:

4) ԵՄԳՊ-ի 26-րդ հոդվածի 2-րդ կետին համապատասխան՝ ներքին շուկան ներքին սահմաններ չունեցող տարածք է, որտեղ ապահովվում են ապրանքների եւ ծառայությունների ազատ տեղաշարժը եւ ձեռնարկությունների հիմնադրման ազատությունը: Սպառողական հեռակա եւ շենքից դուրս կնքված պայմանագրերի որոշակի հայեցակետերի ներդաշնակեցումն անհրաժեշտ է իրական ներքին սպառողական շուկայի խթանման համար՝ գտնելով ճիշտ հավասարակշռություն սպառողի պաշտպանության բարձր մակարդակի ապահովման եւ ձեռնարկությունների

[5] ՊՏ L 144, 4.6.1997թ., էջ 19:

մրցունակության միջեւ, միեւնույն ժամանակ ապահովելով սուբսիդիարության սկզբունքի պահպանումը:

5) Հեռակա վաճառքի միջսահմանային ներուժը, որը պետք է ներքին շուկայի ձեւավորման հիմնական շոշափելի արդյունքներից մեկը լինի, ամբողջովին չի իրագործվել: Վերջին մի քանի տարիներին ներքին շուկայում հեռակա վաճառքի էական աճի համեմատությամբ միջսահմանային հեռակա վաճառքի աճը սահմանափակ է: Այս տարբերությունը հատկապես զգալի է համացանցի միջոցով վաճառքների դեպքում, որտեղ հետագա աճի ներուժը մեծ է: Ձեռնարկության շենքից դուրս բանակցված պայմանագրերի (ուղղակի վաճառք) միջսահմանային ներուժը սահմանափակվում է մի շարք գործոններով, այդ թվում՝ արդյունաբերության ոլորտի համար սահմանված՝ սպառողների պաշտպանության տարբեր ազգային նորմերով: Վերջին մի քանի տարիների ընթացքում ներքին ուղղակի վաճառքի աճի համեմատությամբ, մասնավորապես՝ ծառայությունների ոլորտում, օրինակ՝ կոմունալ ծառայությունների հատվածում, միջսահմանային գնումների համար այս ուղուց օգտվող սպառողների թիվը մնացել է անփոփոխ: Բազմաթիվ անդամ պետություններում ավելացած գործարար հնարավորություններին ի պատասխան՝ փոքր եւ միջին ձեռնարկությունները (այդ թվում՝ առեւտրային գործունեություն իրականացնող անհատները) կամ ուղղակի վաճառքով զբաղվող ընկերությունների գործակալները պետք է առավել հակված լինեն գործարար հնարավորություններ փնտրել այլ անդամ պետություններում, մասնավորապես՝ սահմանամերձ շրջաններում: Հետեւաբար սպառողների համար նախատեսված տեղեկությունների ամբողջական ներդաշնակեցումը եւ հեռակա եւ շենքից դուրս կնքված պայմանագրերի կատարումից հրաժարվելու իրավունքը կնպաստեն սպառողի պաշտպանության բարձր մակարդակին եւ բիզնես-սպառող ներքին շուկայի առավել արդյունավետ գործունեությանը:

6) Որոշ տարբերություններ ներքին շուկայում առեւտրային գործունեություն իրականացնողների եւ սպառողների վրա ազդող զգալի խոչընդոտներ են ստեղծում: Այդ տարբերությունների հետեւանքով ավելանում է ապրանքների միջսահմանային վաճառքով կամ միջսահմանային ծառայությունների մատուցմամբ զբաղվել ցանկացող՝ առեւտրային գործունեություն իրականացնողների կողմից օրենսդրության պահպանման ծախսերը: Անհամաչափ հատվածայնացումը նույնպես խաթարում է սպառողների վստահությունը ներքին շուկայի նկատմամբ:

7) Որոշ առանցքային կարգավորող հայեցակետերի ամբողջական ներդաշնակեցումը պետք է զգալիորեն ավելացնի իրավական որոշակիությունն ինչպես սպառողների, այնպես էլ առեւտրային գործունեություն իրականացնողների համար: Թե՛ սպառողները եւ թե՛ առեւտրային գործունեություն իրականացնողները պետք է հնարավորություն ունենան ապավինելու Միության ամբողջ տարածքում բիզնես-սպառող պայմանագրերի որոշ հայեցակետեր կարգավորող հստակ սահմանված իրավական հասկացությունների վրա հիմնված միասնական նորմատիվ բազային: Այդպիսի ներդաշնակեցման արդյունքը պետք է լինի նորմերի հատվածայնությունից առաջացող խոչընդոտների վերացումը եւ այս ոլորտում ներքին շուկայի ձեւավորման ավարտը: Այդ խոչընդոտները միայն կարող են վերացվել Միության մակարդակով միասնական նորմեր սահմանելու միջոցով: Բացի այդ, Միության ամբողջ տարածքում սպառողները պետք է օգտվեն պաշտպանության ընդհանուր բարձր մակարդակից:

8) Ներդաշնակեցման ենթակա կարգավորող հայեցակետերը պետք է վերաբերեն միայն առեւտրային գործունեություն իրականացնողների եւ սպառողների միջեւ կնքված պայմանագրերին: Հետեւաբար սույն հրահանգը չպետք է ազդի աշխատանքային պայմանագրերի, իրավահաջորդության իրավունքներին առնչվող պայմանագրերի, ընտանեկան իրավունքին

առնչվող պայմանագրերի եւ ընկերությունների հիմնադրմանն ու կազմավորմանն առնչվող պայմանագրերի կամ գործընկերության համաձայնագրերի ոլորտում ազգային իրավունքի վրա:

9) Սույն հրահանգով սահմանվում են նորմեր՝ հեռակա պայմանագրերի, շենքից դուրս կնքված պայմանագրերի եւ այդ պայմանագրերից բացի այլ պայմանագրերի համար տրամադրվող տեղեկությունների վերաբերյալ: Սույն հրահանգով նաեւ կարգավորվում է հեռակա եւ շենքից դուրս կնքված պայմանագրերի կատարումից հրաժարվելու իրավունքը, եւ ներդաշնակեցվում են բիզնես- սպառող պայմանագրերի կատարմանը եւ այլ հայեցակետերի առնչվող որոշ դրույթներ:

10) Սույն հրահանգը չպետք է հակասի «Պայմանագրային պարտավորությունների նկատմամբ կիրառվող իրավունքի մասին» (Հռոմ I) Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2008 թվականի հունիսի 17-ի թիվ 593/2008 (ԵՀ) կանոնակարգին [6]:

11) Սույն հրահանգը չպետք է հակասի Միության՝ կոնկրետ ոլորտների առնչվող դրույթներին, ինչպիսիք են մարդու օգտագործման համար նախատեսված բժշկական արտադրատեսակները, բժշկական սարքերը, գաղտնիությունը եւ էլեկտրոնային հաղորդակցությունները, միջսահմանային առողջապահության ոլորտում հիվանդների իրավունքները, սննդամթերքի պիտակավորումը եւ էլեկտրաէներգիայի եւ բնական գազի ներքին շուկան:

12) Սույն հրահանգով նախատեսված՝ տեղեկատվությանը ներկայացվող պահանջները պետք է լրացնեն «Ներքին շուկայում ծառայությունների մասին» Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2006 թվականի դեկտեմբերի 12-ի 2006/123/ԵՀ հրահանգը [7] եւ «Տեղեկատվական հասարակության ծառայությունների, մասնավորապես՝ ներքին շուկայում էլեկտրոնային առեւտրի որոշ իրավական հայեցակետերի մասին»

[6] ՊՏ L 177, 4.7.2008թ., էջ 6:
[7] ՊՏ L 376, 27.12.2006թ., էջ 36:

Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2000 թվականի հունիսի 8-ի 2000/31/ԵՀ հրահանգի («Էլեկտրոնային առեւտրի մասին հրահանգ») [8] տեղեկատվությանը ներկայացվող պահանջները: Անդամ պետությունները պետք է պահպանեն իրենց տարածքում ստեղծված ծառայություն մատուցողների նկատմամբ կիրառվող՝ տեղեկատվությանը ներկայացվող լրացուցիչ պահանջներ սահմանելու հնարավորությունը:

13) Անդամ պետությունները, Միության իրավունքին համապատասխան, պետք է շարունակեն լինել իրավասու սույն հրահանգի դրույթներն այն ոլորտների նկատմամբ կիրառելու, որոնց վրա չի տարածվում դրա գործողությունը: Հետեւաբար անդամ պետությունները կարող են այն պայմանագրերի մասով ունենալ կամ ընդունել սույն հրահանգի դրույթներին կամ դրա դրույթներից որոշներին համապատասխանող ազգային օրենսդրություն, որոնց վրա չի տարածվում սույն հրահանգի գործողությունը: Օրինակ՝ անդամ պետությունները կարող են որոշել ընդլայնել սույն հրահանգի նորմերի կիրառությունը՝ դրանք տարածելով սույն հրահանգի իմաստով սպառող չհանդիսացող իրավաբանական անձանց կամ ֆիզիկական անձանց վրա, ինչպիսիք են հասարակական կազմակերպությունները, սթարթափները կամ փոքր եւ միջին ձեռնարկությունները: Նույն կերպ, անդամ պետությունները կարող են սույն հրահանգի դրույթները կիրառել այն պայմանագրերի նկատմամբ, որոնք սույն հրահանգի իմաստով հեռակա պայմանագրեր չեն, օրինակ՝ քանի որ դրանք չեն կնքվել հեռակա կարգով կազմակերպվող վաճառքի կամ ծառայությունների մատուցման մեխանիզմին համապատասխան: Ավելին, անդամ պետությունները կարող են նաեւ ուժի մեջ թողնել կամ ընդունել ազգային դրույթներ սույն հրահանգով հատուկ չհասցեագրված այնպիսի հարցերի վերաբերյալ, ինչպիսիք են առուվաճառքի պայմանագրերին վերաբերող լրացուցիչ նորմերը, այդ թվում՝ ապրանքների առաքման մասով, կամ պայմանագրի գործողության ընթացքում տեղեկությունների տրամադրմանը ներկայացվող պահանջները:

[8] ՊՏ L 178, 17.7.2000թ., էջ 1:

14) Սույն հրահանգը չպետք է ազդեցություն գործի պայմանագրային իրավունքի ոլորտում ազգային իրավունքի վրա պայմանագրային իրավունքի այն հայեցակետերի մասով, որոնք չեն կարգավորվում սույն հրահանգով: Հետեւաբար սույն հրահանգը չպետք է հակասի ազգային օրենսդրությանը, որով կարգավորվում են, օրինակ՝ պայմանագրի կնքումը կամ պայմանագրի վավերականությունը (օրինակ՝ համաձայնության բացակայության դեպքում): Նույն կերպ, սույն հրահանգը չպետք է ազդեցություն գործի ընդհանուր պայմանագրային իրավական պաշտպանության միջոցներին վերաբերող ազգային օրենսդրության, հասարակական տնտեսական կարգի վերաբերյալ նորմերի, օրինակ՝ չափազանց բարձր կամ կողոպտչական գների վերաբերյալ նորմերի եւ անբարեխիղճ իրավական գործարքների վերաբերյալ նորմերի վրա:

15) Սույն հրահանգով չպետք է ներդաշնակեցվեն սպառողական պայմանագրերի նկատմամբ կիրառվող լեզվական պահանջները: Հետեւաբար անդամ պետությունները կարող են իրենց ազգային իրավունքում գործողության մեջ թողնել կամ ներդնել պայմանագրային տեղեկություններին եւ պայմանագրային եզրույթներին վերաբերող լեզվական պահանջներ:

16) Սույն հրահանգը չպետք է ազդեցություն գործի իրավական ներկայացուցչության վերաբերյալ ազգային օրենքների վրա, ինչպես օրինակ՝ առեւտրային գործունեություն իրականացնողի կողմից կամ անունից գործող անձանց (ինչպես օրինակ՝ գործակալ կամ հավատարմագրային կառավարիչ) վերաբերյալ նորմերը: Անդամ պետությունները պետք է շարունակեն իրավասություն ունենալ այս ոլորտում: Սույն հրահանգը պետք է կիրառվի բոլոր առեւտրային գործունեություն իրականացնողների նկատմամբ՝ թե՛ պետական եւ թե՛ մասնավոր:

17) Սպառողի սահմանումը պետք է տարածվի այն ֆիզիկական անձանց վրա, որոնք գործում են իրենց առեւտրային գործունեության, գործարարության,

արհեստի կամ մասնագիտության շրջանակներից դուրս: Այնուամենայնիվ, երկակի նշանակության պայմանագրերի դեպքում, երբ պայմանագիրը կնքվել է մասամբ անձի առեւտրային գործունեության շրջանակներում եւ մասամբ այդ գործունեության շրջանակներից դուրս, եւ առեւտրային գործունեության նպատակը սահմանափակված է այնքանով, որ գերիշխող չէ պայմանագրի ամբողջ համատեքստում, այդ անձը նույնպես պետք է համարվի սպառող:

18) Սույն հրահանգն ազդեցություն չի գործում անդամ պետությունների՝ Միության իրավունքին համապատասխան սահմանելու ազատության վրա, թե որոնք են, ըստ իրենց, համարվում ընդհանուր տնտեսական շահ հետապնդող ծառայություններ, ինչպես պետք է այդ ծառայությունները կազմակերպվեն եւ ֆինանսավորվեն պետական աջակցության մասին նորմերի համաձայն, եւ կոնկրետ որ պարտավորությունները նրանք պետք է կատարեն:

19) Թվային բովանդակություն նշանակում է այն տվյալները, որոնք արտադրվում եւ մատակարարվում են թվային եղանակով, ինչպիսիք են համակարգչային ծրագրերը, գործադիրները, խաղերը, երաժշտությունը, տեսանյութերը կամ տեքստերը՝ անկախ նրանից, թե դրանց մատչում են ներբեռնման, թե հոսքային հեռարձակման միջոցով, նյութական կրիչից, թե որեւէ այլ միջոցով: Թվային բովանդակության մատակարարման պայմանագրերի վրա պետք է տարածվի սույն հրահանգի գործողության ոլորտը: Եթե թվային բովանդակությունը մատակարարվում է նյութական կրիչով, օրինակ՝ խտասկավառակով կամ թվային տեսասկավառակով, ապա այն սույն հրահանգի իմաստով պետք է համարվի ապրանք: Ինչպես ջրի, գազի կամ էլեկտրաէներգիայի մատակարարման պայմանագրերը, եթե դրանք վաճառքի չեն դրվել սահմանափակ ծավալով կամ սահմանված քանակով, կամ կենտրոնացված ջեռուցման մատակարարման պայմանագրերը, ոչ նյութական կրիչով մատակարարվող թվային

բովանդակության վերաբերյալ պայմանագրերը սույն հրահանգի նպատակներով չպետք է դասակարգվեն ո՛չ որպես առուվաճառքի պայմանագրեր, ո՛չ որպես ծառայության մատուցման պայմանագրեր: Այդ պայմանագրերի դեպքում սպառողը պետք է պայմանագիրը կատարելուց հրաժարվելու իրավունք ունենա, եթե նա պայմանագիրը կատարելուց հրաժարվելու ժամկետում չի համաձայնել պայմանագրի կատարումը սկսելուն եւ չի ընդունել, որ դրա հետեւանքով կկորցնի պայմանագիրը կատարելուց հրաժարվելու իրավունքից: Ի լրումն տեղեկություններին ներկայացվող ընդհանուր պահանջների՝ առեւտրային գործունեություն իրականացնողը պետք է սպառողին տեղեկացնի թվային բովանդակության ֆունկցիոնալ հնարավորությունների եւ համապատասխան փոխգործակցելիության մասին: «Ֆունկցիոնալ հնարավորությունների» հասկացությունը պետք է վերաբերի այն եղանակներին, որոնցով կարող է օգտագործվել թվային բովանդակությունը, օրինակ՝ սպառողի վարքագծին հետեւելու համար. այն նաեւ պետք է վերաբերի ցանկացած այնպիսի տեխնիկական սահմանափակումների առկայությանը կամ բացակայությանը, ինչպիսին է Թվային իրավունքների կառավարման կամ տարածքային ծածկագրման միջոցով պաշտպանությունը: Համապատասխան փոխգործակցելիություն հասկացությունը նախատեսված է այն ստանդարտ սարքաշարային եւ ծրագրաշարային միջավայրին վերաբերող տեղեկությունները նկարագրելու համար, որոնց հետ թվային բովանդակությունը համատեղելի է, օրինակ՝ օպերացիոն համակարգը, անհրաժեշտ տարբերակը եւ սարքաշարի որոշակի հատկությունները: Հանձնաժողովը պետք է ուսումնասիրի թվային բովանդակությանը վերաբերող դրույթների հետագա ներդաշնակեցման անհրաժեշտությունը եւ անհրաժեշտության դեպքում ներկայացնի օրենսդրական առաջարկ այս հարցի լուծման համար:

20) Հեռակա պայմանագրի սահմանումը պետք է ընդգրկի այն բոլոր դեպքերը, երբ պայմանագիր է կնքվում առեւտրային գործունեություն իրականացնողի եւ սպառողի միջեւ կազմակերպված հեռակա վաճառքի կամ ծառայության մատուցման մեխանիզմով՝ հեռակա հաղորդակցության մեկ կամ մի քանի միջոցի (օրինակ՝ փոստային պատվեր, համացանց, հեռախոս կամ ֆաքս) բացառիկ օգտագործմամբ՝ մինչեւ եւ ներառյալ պայմանագրի կնքման պահը: Այդ սահմանումը նաեւ պետք է ընդգրկի այն իրավիճակները, երբ սպառողն այցելում է ձեռնարկության շենք զուտ ապրանքների կամ ծառայությունների մասին տեղեկություններ հավաքելու նպատակով, եւ հետագայում բանակցում եւ պայմանագիր է կնքում հեռակա կարգով: Դրան հակառակ, պայմանագիրը, որը բանակցվել է առեւտրային գործունեություն իրականացնողի ձեռնարկության շենքում եւ ի վերջո կնքվել է հեռակա հաղորդակցության միջոցով, չպետք է համարվի հեռակա պայմանագիր: Հեռակա պայմանագիր չպետք է համարվի նաեւ հեռակա հաղորդակցության միջոցով նախապատրաստված, սակայն ի վերջո առեւտրային գործունեություն իրականացնողի ձեռնարկության շենքում կնքված պայմանագիրը: Նույն կերպ, հեռակա պայմանագիր հասկացությունը չպետք է ներառի սպառողի կողմից հեռակա հաղորդակցության միջոցով կատարված՝ մասնագետի կողմից ծառայության մատուցման ամրագրումների պահանջը, օրինակ՝ այն դեպքում, երբ սպառողը զանգահարում է, որ հանդիպում նշանակի վարսահարդարի մոտ: Հեռակա կարգով կազմակերպվող վաճառքի կամ ծառայության մատուցման մեխանիզմ հասկացությունը պետք է ներառի առեւտրային գործունեություն իրականացնողից բացի այլ երրորդ կողմի առաջարկած, սակայն առեւտրային գործունեություն իրականացնողի կողմից օգտագործվող ծառայությունները, օրինակ՝ առցանց հարթակը: Այնուամենայնիվ, այն չպետք է ընդգրկի այն դեպքերը, երբ կայքերը պարզապես տեղեկություններ են առաջարկում առեւտրային գործունեություն իրականացնողի, նրա ապրանքների եւ (կամ) ծառայությունների եւ կոնտակտային տվյալների վերաբերյալ:

21) Շենքից դուրս պայմանագիրը պետք է սահմանվի որպես պայմանագիր, որը կնքվել է առեւտրային գործունեություն իրականացնողի եւ սպառողի միաժամանակյա ֆիզիկական ներկայության պայմաններում, առեւտրային գործունեություն իրականացնողի ձեռնարկության շենքը չհանդիսացող վայրում, օրինակ՝ սպառողի տանը կամ աշխատավայրում: Շենքից դուրս համատեքստում սպառողը կարող է գտնվել հնարավոր հոգեբանական ճնշման տակ կամ կարող է հանկարծակիի գալ՝ անկախ նրանից, թե սպառողն է խնդրել առեւտրային գործունեություն իրականացնողին այցելել իրեն, թե՝ ոչ: Շենքից դուրս պայմանագրի սահմանումը պետք է նաեւ ներառի այն իրավիճակները, երբ սպառողին անձամբ եւ անհատապես դիմում են շենքից դուրս համատեքստում, սակայն պայմանագիրը կնքվում է անմիջապես դրանից հետո, առեւտրային գործունեություն իրականացնողի ձեռնարկության շենքում կամ հեռակա հաղորդակցության միջոցով: Շենքից դուրս պայմանագրի սահմանումը չպետք է ընդգրկի այն իրավիճակները, երբ առեւտրային գործունեություն իրականացնողը նախ այցելում է սպառողի տուն բացառապես չափումներ կատարելու եւ նախահաշվարկ տալու նպատակով՝ առանց սպառողի որեւէ պարտավորության, եւ երբ պայմանագիրն այդ դեպքում կնքվում է միայն ավելի ուշ, առեւտրային գործունեություն իրականացնողի ձեռնարկության շենքում կամ հեռակա հաղորդակցության միջոցով՝ առեւտրային գործունեություն իրականացնողի նախահաշվի հիման վրա: Այդ դեպքերում պայմանագիրը չպետք է համարվի առեւտրային գործունեություն իրականացնողի կողմից սպառողին դիմելուց անմիջապես հետո կնքված պայմանագիր, եթե սպառողը մինչեւ պայմանագրի կնքումը ժամանակ է ունեցել մտածելու առեւտրային գործունեություն իրականացնողի նախահաշվի մասին: Առեւտրային գործունեություն իրականացնողի կողմից կազմակերպված այն շրջայցի ընթացքում կատարված գնումները, որի ժամանակ ձեռք բերված արտադրանքը գովազդվում եւ առաջարկվում է վաճառքի համար, պետք է համարվեն շենքից դուրս կնքված պայմանագրեր:

22) Ձեռնարկության շենքերը պետք է ներառեն ցանկացած տիպի շենքեր (ինչպես օրինակ՝ խանութներ, կրպակներ կամ բեռնատարներ), որոնք առեւտրային գործունեություն իրականացնողի համար ծառայում են որպես գործարարությամբ զբաղվելու մշտական կամ սովորական վայրեր: Շուկայի կրպակները եւ տոնավաճառի տաղավարները պետք է համարվեն ձեռնարկության շենք, եթե դրանք բավարարում են այս պայմանը: Մանրածախ առեւտրի իրականացման շենքերը, որտեղ առեւտրային գործունեություն իրականացնողն իր գործունեությունն իրականացնում է սեզոնային հիմունքներով, օրինակ՝ զբոսաշրջային սեզոնի ընթացքում լեռնադահուկային կամ ծովափնյա հանգստյան գոտում, պետք է համարվեն ձեռնարկության շենքեր, քանի որ առեւտրային գործունեություն իրականացնողն իր գործունեությունն այդ վայրերում իրականացնում է սովորական հիմունքներով: Հանրամատչելի տարածքները, ինչպիսիք են փողոցները, խոշոր առեւտրի կենտրոնները, լողափերը, սպորտային համալիրները եւ հանրային տրանսպորտը, որոնք առեւտրային գործունեություն իրականացնողն օգտագործում է իր գործունեության իրականացման համար բացառության կարգով, ինչպես նաեւ մասնավոր տները կամ աշխատավայրերը չպետք է համարվեն ձեռնարկության շենք: Առեւտրային գործունեություն իրականացնողի կողմից կամ անունից գործող անձի ձեռնարկության շենքը սույն հրահանգով սահմանված կարգով պետք է համարվի սույն հրահանգի իմաստով ձեռնարկության շենք:

23) Մշտական կրիչները պետք է սպառողին հնարավորություն տան տեղեկություններն այնքան ժամանակ պահելու, որքան անհրաժեշտ է նրան առեւտրային գործունեություն իրականացնողի հետ ունեցած հարաբերություններից բխող իր շահերի պաշտպանության համար: Այդ կրիչները մասնավորապես ներառում են թուղթը, USB կրիչները, խտասկավառակատարները, տեսասկավառակները, հիշողության քարտերը կամ համակարգիչների կոշտ սկավառակները, ինչպես նաեւ էլեկտրոնային փոստը:

24) Հրապարակային աճուրդ ասելով հասկանում ենք, որ առեւտրային գործունեություն իրականացնողները եւ սպառողներն անձամբ մասնակցում են աճուրդին, կամ նրանց տրված է աճուրդին անձամբ մասնակցելու հնարավորություն: Առեւտրային գործունեություն իրականացնողն ապրանքներն ու ծառայությունները սպառողին է առաջարկում որոշ անդամ պետություններում օրենքով թույլատրված՝ հանրային վաճառքի ընթացքում ապրանքների կամ ծառայությունների սակարկության ընթացակարգի միջոցով: Հաղթող ճանաչված մասնակիցը պարտավորված է գնել ապրանքները կամ ծառայությունները: Աճուրդի նպատակներով սպառողների եւ առեւտրային գործունեություն իրականացնողների տրամադրության տակ գտնվող առցանց հարթակների օգտագործումը սույն հրահանգի իմաստով չպետք է համարվի հրապարակային աճուրդ:

25) Սույն հրահանգի գործողությունը պետք է տարածվի կենտրոնացված ջեռուցմանն առնչվող պայմանագրերի վրա՝ ինչպես ջրի, գազի, էլեկտրաէներգիայի մատակարարման պայմանագրերի վրա: Կենտրոնացված ջեռուցումը վերաբերում է մի շարք շենքերի ջեռուցման նպատակով, ի թիվս այլնի, գոլորշու կամ տաք ջրի տեսքով արտադրության կենտրոնական աղբյուրից հաղորդման եւ բաշխման համակարգի միջոցով ջերմության մատակարարմանը:

26) Անշարժ գույքի կամ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների փոխանցման կամ այդպիսի անշարժ գույքի կամ դրա նկատմամբ իրավունքների ստեղծման կամ ձեռքբերման մասին պայմանագրերը, նոր շենքերի շինարարության կամ գոյություն ունեցող շենքերի զգալի վերակառուցման մասին պայմանագրերը, ինչպես նաեւ բնակության նպատակներով բնակելի տարածքի վարձակալության պայմանագրերն ազգային օրենսդրության շրջանակներում արդեն իսկ ենթակա են մի շարք հատուկ պահանջների: Այդ պայմանագրերն օրինակ ներառում են դեռեւս կառուցապատման ենթակա անշարժ գույքի առուվաճառքի եւ տարաժամկետ վճարման պայմանագրերը:

Սույն հրահանգի դրույթները պատշաճ չեն այդ պայմանագրերի դեպքում, որոնք հետեւաբար պետք է բացառվեն դրա գործողության շրջանակից: Զգալի վերակառուցումը նոր շենքի շինարարության հետ համեմատելի վերակառուցումն է, օրինակ՝ երբ պահպանվում է միայն հին շենքի ճակատամասը: Ծառայությունների մատուցման պայմանագրերը, մասնավորապես՝ շենքերի կցակառույցների (օրինակ՝ ավտոտնակի կամ ծածկապատշգամբի) շինարարության հետ կապված պայմանագրերը եւ շենքերի՝ զգալի վերակառուցումից բացի այլ վերանորոգման եւ վերականգնման հետ կապված պայմանագրերը, ինչպես նաեւ անշարժ գույքի գործակալի ծառայությունների հետ կապված պայմանագրերը եւ ոչ բնակության նպատակներով բնակելի տարածքի վարձակալության պայմանագրերը պետք է ներառվեն սույն հրահանգի գործողության շրջանակներում:

27) Տրանսպորտային ծառայություններն ընդգրկում են ուղեւորափոխադրումները եւ բեռնափոխադրումները: Ուղեւորափոխադրումը պետք է բացառվի սույն հրահանգի գործողության շրջանակից, քանի որ այն արդեն իսկ կարգավորվում է Միության այլ օրենսդրությամբ կամ հասարակական տրանսպորտի եւ տաքսիների դեպքում կարգավորվում է ազգային մակարդակով: Այնուամենայնիվ, սույն հրահանգի այն դրույթները, որոնցով սպառողները պաշտպանվում են վճարային միջոցների օգտագործման համար չափազանց բարձր վճարներ վճարելուց կամ թաքնված ծախսերից, պետք է կիրառվեն նաեւ ուղեւորափոխադրման պայմանագրերի նկատմամբ: Ծառայություններ հանդիսացող՝ ապրանքների փոխադրման եւ ավտոմեքենաների վարձակալության մասով սպառողները պետք է օգտվեն սույն հրահանգով տրամադրվող պաշտպանությունից՝ բացառությամբ պայմանագիրը կատարելուց հրաժարվելու իրավունքի:

28) Առեւտրային գործունեություն իրականացնողների վրա դրվող վարչական բեռից խուսափելու համար անդամ պետությունները կարող են որոշել

չկիրառելու սույն հրահանգը, եթե ցածրարժեք ապրանքները կամ ծառայությունները վաճառվում են շենքից դուրս: Դրամական շեմը պետք է սահմանվի բավականաչափ ցածր մակարդակով, որպեսզի բացառվեն միայն քիչ կարեւորության գնումները: Անդամ պետություններին պետք է թույլատրվի իրենց ազգային օրենսդրության մեջ սահմանելու այդ արժեքը՝ պայմանով, որ այն չգերազանցի 50 եվրոն: Եթե սպառողի կողմից միաժամանակ կնքվում են իրար հետ փոխկապակցված առարկայով երկու կամ ավելի պայմանագրեր, ապա դրանց ընդհանուր արժեքը պետք է հաշվի առնվի սույն շեմը կիրառելու նպատակով:

29) Սոցիալական ծառայություններն ունեն սկզբունքորեն տարբեր հատկանիշներ, որոնք արտացոլվում են ոլորտային օրենսդրության մեջ, մասամբ Միության մակարդակով եւ մասամբ ազգային մակարդակով: Սոցիալական ծառայությունները ներառում են մի կողմից հատկապես աղքատ կամ ցածր եկամուտ ունեցող անձանց մատուցվող ծառայությունները, ինչպես նաեւ իրենց առօրյա, ամենօրյա խնդիրները լուծելիս աջակցության կարիք ունեցող անձանց եւ ընտանիքներին մատուցվող ծառայությունները, իսկ մյուս կողմից՝ կյանքի կոնկրետ փուլում օժանդակության, աջակցության, պաշտպանության կամ խրախուսման հատուկ կարիք ունեցող բոլոր անձանց մատուցվող ծառայությունները: Սոցիալական ծառայությունները, ի թիվս այլնի, ներառում են երեխաներին եւ երիտասարդներին մատուցվող ծառայությունները, ընտանիքներին, միայնակ ծնողներին եւ տարեցներին օժանդակություն ցուցաբերելու ծառայությունները եւ միգրանտներին մատուցվող ծառայությունները: Սոցիալական ծառայություններն ընդգրկում են ինչպես կարճաժամկետ, այնպես էլ երկարաժամկետ խնամքի ծառայությունները, օրինակ՝ տնային խնամքի ծառայությունները կամ տարեցների տուն-ինտերնատներում կամ ծերանոցներում մատուցվող կամ բնակարանային խնամքի ծառայությունները (խնամքի տներ): Սոցիալական ծառայությունները

ներառում են ոչ միայն պետության կողմից ազգային, տարածաշրջանային կամ տեղական մակարդակով, պետության կողմից լիազորված տրամադրողների կամ պետության կողմից ճանաչված բարեգործական կազմակերպությունների կողմից մատուցվող ծառայությունները, այլեւ մասնավոր օպերատորների կողմից մատուցվող ծառայությունները: Սույն հրահանգի դրույթները կիրառելի չեն այն սոցիալական ծառայությունների նկատմամբ, որոնք հետեւաբար պետք է բացառվեն դրա գործողության շրջանակից:

30) Առողջապահությունն իր տեխնիկական բարդության, որպես ընդհանուր շահ հետապնդող ծառայություն իր կարեւորության, ինչպես նաեւ դրա լայնածավալ պետական ֆինանսավորման պատճառով պահանջում է հատուկ կարգավորումներ: Առողջապահություն հասկացությունը Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի «Միջսահմանային առողջապահության ոլորտում հիվանդների իրավունքների կիրառման մասին» 2011 թվականի մարտի 9-ի 2011/24/ԵՄ հրահանգում [9] սահմանված է որպես «առողջապահության ոլորտի մասնագետների կողմից հիվանդներին իրենց առողջական վիճակը գնահատելու, պահպանելու կամ վերականգնելու նպատակով տրամադրվող առողջապահական ծառայություններ, այդ թվում՝ դեղամիջոցների եւ բժշկական սարքերի նշանակումը, բացթողումը եւ տրամադրումը»: Առողջապահության ոլորտի մասնագետն այդ հրահանգում սահմանված է որպես Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի «Մասնագիտական որակավորումները ճանաչելու մասին» [10] 2005 թվականի սեպտեմբերի 7-ի 2005/36/ԵՀ հրահանգի իմաստով բժիշկ, ընդհանուր պրակտիկայի բուժքույր (բուժեղբայր), ատամնաբույժ, մանկաբարձ կամ դեղագործ կամ առողջապահության ոլորտում գործունեություն իրականացնող այլ մասնագետ, որը սահմանափակվում է 2005/36/ԵՀ հրահանգի 3-րդ հոդվածի 1-ին կետի «ա» ենթակետով

[9] ՊՏ L 88, 2011 թվականի ապրիլի 4, էջ 45:
[10] ՊՏ L 255, 2005 թվականի սեպտեմբերի 30, էջ 22:

սահմանված կարգով կարգավորվող մասնագիտության շրջանակներով, կամ բուժման անդամ պետության օրենսդրության համաձայն առողջապահության ոլորտի մասնագետ համարվող անձ: Սույն հրահանգի դրույթները կիրառելի չեն առողջապահության նկատմամբ, որը պետք է հետեւաբար բացառվի դրա գործողության շրջանակից:

31) Մոլեխաղերը պետք է բացառվեն սույն հրահանգի գործողության շրջանակից: Մոլեխաղերի հետ կապված գործունեությունն այն գործունեությունն է, որը ներառում է շահումով խաղերում, այդ թվում՝ վիճակախաղերում, խաղատներում անցկացվող մոլեխաղերում դրամով գրազը եւ խաղադրույքների կատարումը: Անդամ պետությունները պետք է կարողանան այդ գործունեության մասով ընդունել այլ, այդ թվում՝ սպառողների պաշտպանության առավել խիստ միջոցներ:

32) Միության գործող օրենսդրությունը, որը, ի թիվս այլնի, վերաբերում է սպառողներին մատուցվող ֆինանսական ծառայություններին, զբոսաշրջային փաթեթներին եւ տարաժամկետ (ժամկետային հաջորդականությամբ) օգտագործմանը, պարունակում է սպառողների պաշտպանության մասին բազմաթիվ նորմեր: Այդ պատճառով սույն հրահանգը չպետք է կիրառվի այդ ոլորտների պայմանագրերի վրա: Ինչ վերաբերում է ֆինանսական ծառայություններին, ապա անհրաժեշտ է անդամ պետություններին խրախուսել Միության մակարդակով չկարգավորվող ոլորտներում օրենսդրություն մշակելիս առաջնորդվել Միության՝ տվյալ ոլորտում գործող օրենսդրությամբ այնպես, որ հավասար պայմաններ ապահովվեն բոլոր սպառողների եւ ֆինանսական ծառայություններին վերաբերող բոլոր պայմանագրերի համար:

33) Առեւտրային գործունեություն իրականացնողը պարտավոր է սպառողին նախօրոք տեղեկացնել ցանկացած պայմանավորվածության մասին, որի արդյունքում սպառողն առեւտրային գործունեություն իրականացնողին վճարում է դեպոզիտ, այդ թվում՝ ցանկացած պայմանավորվածության

մասին, որով սպառողի վարկային կամ դեբետային քարտի վրա գումար է սառեցվում:

34) Առեւտրային գործունեություն իրականացնողը պետք է սպառողին հստակ եւ սպառիչ տեղեկություններ տրամադրի մինչեւ սպառողի՝ հեռակա կամ շենքից դուրս պայմանագրով, հեռակա կամ շենքից դուրս պայմանագրից բացի այլ պայմանագրով կամ ցանկացած համապատասխան առաջարկով պարտավորություն ստանձնելը: Այդ տեղեկությունները տրամադրելիս առեւտրային գործունեություն իրականացնողը պետք է հաշվի առնի այն սպառողների հատուկ կարիքները, որոնք հատկապես խոցելի են իրենց մտավոր, ֆիզիկական կամ հոգեկան անկայունության, տարիքի կամ դյուրահավատության պատճառով, այնպիսի եղանակով, որն առեւտրային գործունեություն իրականացնողից կարող էր ողջամտորեն ակնկալվել կանխատեսել: Այնուամենայնիվ, այդ հատուկ կարիքները հաշվի առնելը չպետք է հանգեցնի սպառողի պաշտպանության տարբեր մակարդակների:

35) Առեւտրային գործունեություն իրականացնողի կողմից սպառողին տրամադրվելիք տեղեկությունները պետք է լինեն պարտադիր եւ փոփոխման ոչ ենթակա: Այնուհանդերձ, պայմանավորվող կողմերը պետք է կարողանան բացահայտ համաձայնության գալ հետագայում կնքվելիք պայմանագրի բովանդակության մեջ, օրինակ՝ առաքման պայմաններում փոփոխություններ կատարելու հարցում:

36) Հեռակա պայմանագրերի դեպքում տեղեկություններին ներկայացվող պահանջները պետք է համապատասխանեցվեն՝ հաշվի առնելով տեղեկատվության որոշ միջոցների այնպիսի տեխնիկական սահմանափակումները, ինչպիսիք են որոշ բջջային հեռախոսների էկրանների վրա գրանշանների թվի սահմանափակումները կամ հեռուստատեսային գովազդային հոլովակների ժամանակային սահմանափակումները: Այդպիսի դեպքերում առեւտրային գործունեություն իրականացնողը պետք է պահպանի տեղեկություններին ներկայացվող

պահանջների նվազագույն խումբը եւ հաճախորդին ուղղորդի դեպի տեղեկությունների մեկ այլ աղբյուր, օրինակ՝ տրամադրելով անվճար հեռախոսահամար կամ առեւտրային գործունեություն իրականացնողի այն կայքէջի հիպերտեքստային հղումը, որտեղ համապատասխան տեղեկություններն ուղղակիորեն հասանելի եւ դյուրամատչելի են: Ինչ վերաբերում է այն ապրանքների վերադարձի արժեքի մասին սպառողին տեղեկացնելու պահանջին, որոնք իրենց բնույթով որպես կանոն չեն կարող վերադարձվել փոստով, ապա այն բավարարված կհամարվի, օրինակ, եթե առեւտրային գործունեություն իրականացնողը նշի մեկ բեռնափոխադրող (օրինակ՝ այն բեռնափոխադրողը, որին նշանակել էր ապրանքն առաքելու համար) եւ ապրանքների վերադարձի արժեքի մասով մեկ գին: Եթե առեւտրային գործունեություն իրականացնողը ողջամտորեն չի կարող նախօրոք հաշվարկել ապրանքների վերադարձի արժեքը, օրինակ՝ այն պատճառով, որ առեւտրային գործունեություն իրականացնողը չի առաջարկում ապրանքների վերադարձը կազմակերպել ինքնուրույն, ապա առեւտրային գործունեություն իրականացնողը պետք է հայտարարություն ներկայացնի այն մասին, որ այդ արժեքը վճարման ենթակա կլինի, եւ որ այն կարող է բարձր լինել՝ միաժամանակ ներկայացնելով առավելագույն արժեքի ողջամիտ հաշվարկ, որը կարող է հիմնված լինել սպառողին ապրանք առաքելու արժեքի վրա:

37) Քանի որ հեռակա վաճառքի դեպքում սպառողը չի կարող ապրանքները տեսնել մինչեւ պայմանագիր կնքելը, նա պետք է ունենա պայմանագիրը կատարելուց հրաժարվելու իրավունք: Նույն պատճառով պետք է թույլատրվի, որ սպառողը փորձարկի եւ ստուգի իր գնած ապրանքներն այնքանով, որքանով դա անհրաժեշտ է ապրանքների բնույթը, բնութագրերը եւ աշխատանքը պարզելու համար: Ինչ վերաբերում է շենքից դուրս պայմանագրերին, ապա սպառողը պետք է ունենա պայմանագիրը հնարավոր անսպասելիության տարրի եւ (կամ) հոգեբանական ճնշման

պատճառով կատարելուց հրաժարվելու իրավունք: Պայմանագիրը կատարելուց հրաժարվելով պետք է դադարեցվի պայմանավորվող կողմերի՝ պայմանագիրը կատարելու պարտավորությունը:

38) Առցանց առեւտրային կայքերում պետք է առնվազն պատվիրման գործընթացի սկզբում հստակ եւ ընթեռնելի նշվի՝ արդյոք կիրառվում է առաքման որեւէ սահմանափակում, եւ վճարման որ միջոցներն են ընդունվում:

39) Կայքերի միջոցով կնքված հեռակա պայմանագրերի դեպքում կարեւոր է ապահովել, որ սպառողը մինչեւ իր պատվեր կատարելը հնարավորություն ունենա ամբողջությամբ ընթերցել եւ հասկանալ պայմանագրի հիմնական տարրերը: Այդ նպատակով սույն հրահանգում պետք է նախատեսվի, որ այդ տարրերը ցուցադրվեն պատվերի կատարման համար պահանջվող հաստատմանը շատ մոտ: Նաեւ կարեւոր է ապահովել, որ այդպիսի իրավիճակներում սպառողը կարողանա որոշել այն պահը, երբ ինքը ստանձնում է առեւտրային գործունեություն իրականացնողին վճարելու պարտավորությունը: Հետեւաբար սպառողի ուշադրությունը պետք է հատուկ, առանց երկիմաստ ձեւակերպման, հրավիրվի այն փաստի վրա, որ պատվերի կատարումն առաջացնում է առեւտրային գործունեություն իրականացնողին վճարելու պարտավորություն:

40) Ինչպես անդամ պետությունների միջեւ կնքված պայմանագրերի, այնպես էլ հեռակա եւ շենքից դուրս պայմանագրերը կատարելուց հրաժարվելու ժամկետների տեւողության առկա տարբերություններն իրավական անորոշություն եւ կատարման հետ կապված ծախսեր են առաջացնում: Հեռակա եւ շենքից դուրս բոլոր պայմանագրերի նկատմամբ պետք է կիրառվի պայմանագիրը կատարելուց հրաժարվելու միեւնույն ժամկետը: Ծառայությունների մատուցման պայմանագրերի դեպքում պայմանագիրը կատարելուց հրաժարվելու ժամկետը պետք է լրանա պայմանագիրը կնքելուց 14 օր հետո: Առուվաճառքի պայմանագրերի դեպքում

պայմանագիրը կատարելուց հրաժարվելու ժամկետը լրանում է այն օրվանից 14 օր հետո, երբ սպառողը կամ բեռնափոխադրողից բացի այլ եւ սպառողի կողմից նշված երրորդ կողմը ստանձնում է ապրանքների ֆիզիկական տնօրինումը: Բացի այդ, սպառողը պետք է կարողանա իրացնել պայմանագիրը կատարելուց հրաժարվելու իր իրավունքը մինչեւ ապրանքների ֆիզիկական տնօրինումը ստանձնելը: Եթե սպառողը մեկ պատվերով պատվիրել է մի քանի ապրանք, սակայն դրանք առաքվում են առանձին, ապա պայմանագիրը կատարելուց հրաժարվելու ժամկետը պետք է լրանա սպառողի կողմից վերջին ապրանքի ֆիզիկական տնօրինումը ստանձնելուց 14 օր հետո: Եթե ապրանքներն առաքվում են մի քանի խմբաքանակներով կամ կտորներով, ապա պայմանագիրը կատարելուց հրաժարվելու ժամկետը պետք է լրանա սպառողի կողմից վերջին խմբաքանակի կամ կտորի ֆիզիկական տնօրինումը ստանձնելուց 14 օր հետո:

41) Իրավական որոշակիություն ապահովելու համար նպատակահարմար է, որ սույն հրահանգում պարունակվող ժամկետների նկատմամբ կիրառվի Խորհրդի 1971 թվականի հունիսի 3-ի «ժամանակահատվածների, ամսաթվերի եւ ժամկետների նկատմամբ կիրառվող կանոնները սահմանող» [11]թիվ 1182/71 կանոնակարգը (ԵՏՀ, Եվրատոմ): Հետեւաբար սույն հրահանգում պարունակվող բոլոր ժամկետները պետք է հասկացվեն որպես օրացուցային օրերով արտահայտված: Եթե օրերով արտահայտված ժամկետը պետք է հաշվարկվի այն պահից, երբ տեղի է ունենում որեւէ գործողություն կամ իրադարձություն, ապա այն օրը, երբ տեղի է ունենում իրադարձությունը կամ գործողությունը, չպետք է համարվի տվյալ ժամկետում գտնվող:

42) Պայմանագիրը կատարելուց հրաժարվելուն վերաբերող դրույթները չպետք է հակասեն անդամ պետությունների՝ պայմանագրի դադարման կամ

[11] ՊՏ L 124, 8.6.1971թ., էջ 1:

կիրարկելի չլինելը կամ մինչեւ պայմանագրով սահմանված ժամանակը սպառողի կողմից իր պայմանագրային պարտավորությունների կատարման հնարավորությունը կարգավորող օրենքներին եւ կանոնակարգերին:

43) Եթե առեւտրային գործունեություն իրականացնողը սպառողին պատշաճ կերպով այդ մասին չի տեղեկացրել մինչեւ հեռակա կամ շենքից դուրս պայմանագրի կնքումը, ապա պայմանագիրը կատարելուց հրաժարվելու ժամկետը պետք է երկարաձգվի: Այնուամենայնիվ, պայմանագիրը կատարելուց հրաժարվելու ժամկետի տեւողության մասով իրավական որոշակիություն ապահովելու համար պետք է սահմանվի 12-ամսյա վաղեմության ժամկետ:

44) Անդամ պետությունների կողմից պայմանագիրը կատարելուց հրաժարվելու իրավունքն իրացնելու եղանակների տարբերությունները միջսահմանային առեւտրով զբաղվող՝ առեւտրային գործունեություն իրականացնողների համար ծախսեր են առաջացրել: Պայմանագիրը կատարելուց հրաժարվելու ներդաշնակեցված օրինակելի ձեւի ներդրումը, որը սպառողը կարող է օգտագործել, պետք է պարզեցնի պայմանագիրը կատարելուց հրաժարվելու գործընթացը եւ իրավական որոշակիություն բերի: Այդ պատճառով անդամ պետությունները պետք է զերծ մնան Միության ամբողջ տարածքում օգտագործվող այն օրինակելի ձեւում ներկայացման մասով որեւէ պահանջի ավելացումից, որը կապված է, օրինակ, տառաչափի հետ: Այնուամենայնիվ, սպառողը պետք է պահպանի սեփական հայեցողությամբ պայմանագիրը կատարելուց հրաժարվելու ազատությունը՝ պայմանով, որ պայմանագիրը կատարելուց հրաժարվելու իր որոշման մասին առեւտրային գործունեություն իրականացնողին արված հայտարարությունը միանշանակ է: Այս պահանջը կարող է բավարարվել նամակ ուղարկելու, հեռախոսազանգ կատարելու կամ հստակ հայտարարությամբ ապրանքները վերադարձնելու միջոցով, սակայն սույն հրահանգով սահմանված ժամկետներում պայմանագիրը կատարելուց հրաժարված լինելու ապացուցման բեռը պետք է կրի սպառողը: Այս

պատճառով պայմանագիրը կատարելուց հրաժարվելու իր որոշման մասին առեւտրային գործունեություն իրականացնողին հաղորդելիս տեղեկություններ ներկայացնելու հուսալի միջոց օգտագործելը բխում է սպառողի շահերից:

45) Քանի որ փորձը ցույց է տալիս, որ շատ սպառողներ եւ առեւտրային գործունեություն իրականացնողներ նախընտրում են հաղորդակցվել առեւտրային գործունեություն իրականացնողի կայքի միջոցով, առեւտրային գործունեություն իրականացնողի համար պետք է առկա լինի հնարավորություն սպառողին տալու պայմանագիրը կատարելուց հրաժարվելու ձեւի՝ կայքում հասանելի լրացման տարբերակ: Այս դեպքում առեւտրային գործունեություն իրականացնողը պետք է անհապաղ ստացման վերաբերյալ հաստատում տրամադրի, օրինակ՝ էլեկտրոնային փոստով:

46) Սպառողի կողմից պայմանագիրը կատարելուց հրաժարվելու դեպքում առեւտրային գործունեություն իրականացնողը պետք է փոխհատուցի սպառողից ստացված բոլոր վճարները, այդ թվում՝ սպառողին ապրանքների առաքման համար առեւտրային գործունեություն իրականացնողի կողմից կրած ծախսերի դիմաց կատարված վճարները: Փոխհատուցումը չպետք է կատարվի վաուչերով, եթե սպառողը նախնական գործարքի դեպքում չի օգտագործել վաուչերներ կամ հստակ չի ընդունել դրանք: Եթե սպառողը հստակ ընտրում է առաքման որոշակի տեսակ (օրինակ՝ շուրջօրյա էքսպրես առաքում), թեեւ առեւտրային գործունեություն իրականացնողն առաջարկել է ընդհանուր եւ բոլորի կողմից ընդունելի առաքման տեսակ, որի դեպքում առաքման հետ կապված ավելի քիչ ծախսեր կկատարվեին, սպառողը պետք է վճարի առաքման այդ երկու տեսակների միջեւ առկա տարբերությունը:

47) Որոշ սպառողներ պայմանագիրը կատարելուց հրաժարվելու իրենց իրավունքն իրացնում են ապրանքների բնույթը, բնութագրերը եւ աշխատանքը պարզելու համար անհրաժեշտ չափից ավելի ապրանքներն օգտագործելուց հետո: Այդ դեպքում սպառողը չպետք է կորցնի

պայմանագիրը կատարելուց հրաժարվելու իրավունքը, սակայն պետք է պատասխանատվություն կրի ապրանքների արժեքի ցանկացած նվազման համար: Ապրանքների բնույթը, բնութագրերը եւ աշխատանքը պարզելու համար սպառողը դրանք պետք է միայն զննի եւ ստուգի նույն եղանակով, ինչպես իրեն դա կթույլատրվեր անել խանութում: Օրինակ՝ սպառողը պետք է միայն փորձի հագուստը, եւ նրան չպետք է թույլատրվի այն կրել: Հետեւաբար սպառողը պետք է պայմանագիրը կատարելուց հրաժարվելու ժամկետի ընթացքում անհրաժեշտ խնամքով զննի եւ ստուգի ապրանքները: Պայմանագիրը կատարելուց հրաժարվելու դեպքում սպառողի պարտավորությունները չպետք է հետ կանգնեցնեն սպառողին պայմանագիրը կատարելուց հրաժարվելու իր իրավունքն իրացնելուց:

48) Սպառողից պետք է պահանջվի ապրանքները հետ ուղարկել պայմանագիրը կատարելուց հրաժարվելու իր որոշման մասին առեւտրային գործունեություն իրականացնողին տեղեկացնելուց ոչ ուշ, քան 14 օր հետո: Այն իրավիճակներում, երբ առեւտրային գործունեություն իրականացնողը կամ սպառողը չի կատարում պայմանագիրը կատարելուց հրաժարվելու իրավունքի իրացմանն առնչվող իր պարտավորությունները, պետք է կիրառվեն սույն հրահանգին համապատասխան ազգային օրենսդրությամբ, ինչպես նաեւ պայմանագրային իրավունքի դրույթներով նախատեսված պատժամիջոցները:

49) Պետք է գործեն որոշակի բացառություններ պայմանագիրը կատարելուց հրաժարվելու իրավունքից՝ ինչպես հեռակա, այնպես էլ շենքից դուրս պայմանագրերի դեպքում: Պայմանագիրը կատարելուց հրաժարվելը կարող է ոչ նպատակահարմար լինել, օրինակ՝ հաշվի առնելով առանձին ապրանքների կամ ծառայությունների բնույթը: Այդպես է, օրինակ, սպեկուլյատիվ պայմանագիր կնքելուց տեւական ժամանակ հետո մատակարարված գինու դեպքում, որտեղ արժեքը կախված է շուկայում գների տատանումներից (vin en primeur): Պայմանագիրը կատարելուց

հրաժարվելու իրավունքը չպետք է կիրառվի ո՛չ այն ապրանքների նկատմամբ, որոնք արտադրվել են սպառողի մասնագրերին համապատասխան կամ ակնհայտորեն անհատականացված են, օրինակ՝ պատվերով պատրաստված վարագույրների, ո՛չ էլ վառելիքի մատակարարման նկատմամբ, օրինակ, որն իր բնույթով ապրանք է, որն առաքումից հետո անբաժանելիորեն խառնվում է այլ ապրանքատեսակների հետ: Սպառողին պայմանագիրը կատարելուց հրաժարվելու իրավունք շնորհելը նաեւ կարող է ոչ նպատակահարմար լինել որոշակի ծառայությունների դեպքում, երբ պայմանագրի կնքումը ենթադրում է այն ներուժը մի կողմ թողնելը, որը պայմանգիրը կատարելուց հրաժարվելու իրավունքն իրացնելու դեպքում առեւտրային գործունեություն իրականացնողին հնարավոր է դժվար լինի լրացնել: Դա կարող է լինել, օրինակ, հյուրանոցներում ամրագրումներ կատարելու դեպքում կամ ամառանոցների կամ մշակութային կամ սպորտային միջոցառումների առնչությամբ:

50) Մի կողմից՝ սպառողը պետք է օգուտ ստանա պայմանագիրը կատարելուց հրաժարվելու իր իրավունքից նույնիսկ այն դեպքում, երբ նա դիմում է ծառայությունների մատուցման խնդրանքով նախքան պայմանագիրը կատարելուց հրաժարվելու ժամկետի ավարտը: Մյուս կողմից՝ եթե սպառողն իրացրել է պայմանագիրը կատարելուց հրաժարվելու իր իրավունքը, ապա առեւտրային գործունեություն իրականացնողը պետք է հավաստիացած լինի, որ իր կողմից մատուցված ծառայության դիմաց ստանալու է պատշաճ վճար: Համաչափ գումարի հաշվարկումը պետք է հիմնված լինի պայմանագրով համաձայնեցված գնի վրա, եթե սպառողը չի ապացուցում, որ այդ ընդհանուր գինն ինքնին անհամաչափ է, ինչի դեպքում վճարման ենթակա գումարը հաշվարկվում է մատուցված ծառայության շուկայական արժեքի հիման վրա: Շուկայական արժեքը պետք է սահմանվի պայմանագիրը կնքելու ժամանակահատվածում այլ առեւտրային գործունեություն

իրականացնողների կողմից մատուցված համարժեք ծառայության գնի հետ համեմատելու միջոցով: Հետեւաբար սպառողը պետք է ծառայությունների մատուցումը պահանջի մինչեւ պայմանագիրը կատարելուց հրաժարվելու ժամկետի ավարտը՝ այդ պահանջը հստակ ներկայացնելով, իսկ շենքից դուրս պայմանագրերի դեպքում՝ մշտական կրիչով: Նույն կերպ, առեւտրային գործունեություն իրականացնողը պետք է սպառողին մշտական կրիչի միջոցով տեղեկացնի արդեն մատուցված ծառայությունների դիմաց համաչափ արժեք վճարելու ցանկացած պարտավորության մասին: Այն պայմանագրերի դեպքում, որոնց առարկան ինչպես ապրանքներ, այնպես էլ ծառայություններ են, սույն հրահանգում նախատեսված՝ ապրանքները վերադարձնելու մասին նորմերը պետք է կիրառվեն ապրանքների մասով, իսկ ծառայությունների փոխհատուցման ռեժիմը պետք է կիրառվի ծառայությունների մասով:

51) Հիմնական դժվարությունները, որոնց բախվում են սպառողները, եւ առեւտրային գործունեություն իրականացնողների հետ վեճերի հիմնական պատճառներից մեկը վերաբերում են ապրանքների առաքմանը, այդ թվում՝ փոխադրման ընթացքում ապրանքների կորստին կամ վնասվելուն եւ ուշացումով կամ մասնակի առաքմանը: Հետեւաբար նպատակահարմար է հստակեցնել եւ ներդաշնակեցնել առաքման ժամկետի վերաբերյալ ազգային նորմերը: Առաքման վայրը եւ եղանակները, ինչպես նաեւ ապրանքների նկատմամբ սեփականության փոխանցման պայմանների եւ այդ փոխանցումը տեղի ունենալու պահի որոշմանը վերաբերող նորմերը պետք է շարունակեն կարգավորվել ազգային օրենսդրությամբ, եւ հետեւաբար սույն հրահանգի գործողությունը դրանց վրա չպետք է տարածվի: Սույն հրահանգում սահմանված՝ առաքման մասին նորմերը պետք է ներառեն սպառողի համար երրորդ կողմին իր անունից ապրանքների ֆիզիկական տնօրինումը եւ վերահսկողությունը թույլատրելու հնարավորությունը: Համարվում է, որ սպառողը վերահսկողություն է իրականացնում

ապրանքների նկատմամբ, եթե նա կամ սպառողի կողմից նշված երրորդ կողմն այդ ապրանքներին մատչելիություն ունի որպես սեփականատեր օգտագործելու համար, կամ նա ունի ապրանքները վերավաճառելու կարողություն (օրինակ, երբ նա ստացել է բանալիները կամ սեփականության իրավունքի վերաբերյալ փաստաթղթերի նկատմամբ տիրապետումը):

52) Առուվաճառքի պայմանագրերի համատեքստում ապրանքների առաքումը կարող է տեղի ունենալ տարբեր եղանակներով՝ անմիջապես կամ ավելի ուշ: Եթե կողմերը համաձայնության չեն եկել առաքման կոնկրետ ամսաթվի վերաբերյալ, ապա առեւտրային գործունեություն իրականացնողը պետք է ապրանքներն առաքի հնարավորինս շուտ, սակայն ցանկացած դեպքում ոչ ուշ, քան պայմանագիրը կնքելու օրվանից 30 օր հետո: Ուշացումով առաքմանն առնչվող նորմերով պետք է նաեւ հաշվի առնվեն հատուկ սպառողի համար արտադրման կամ ձեռքբերման ենթակա ապրանքները, որոնք առեւտրային գործունեություն իրականացնողի կողմից չեն կարող վերաօգտագործվել առանց նշանակալի կորստի: Հետեւաբար սույն հրահանգով պետք է նախատեսվի նորմ, որով առեւտրային գործունեություն իրականացնողին որոշակի հանգամանքներում լրացուցիչ ողջամիտ ժամկետ է տրամադրվում: Եթե առեւտրային գործունեություն իրականացնողն ապրանքները չի առաքել սպառողի հետ համաձայնեցված ժամկետում, ապա մինչեւ սպառողի կողմից պայմանագրի դադարեցման հնարավորություն ունենալը սպառողը պետք է առեւտրային գործունեություն իրականացնողից պահանջի առաքումը կատարել լրացուցիչ ողջամիտ ժամկետում եւ իրավունք ունենա դադարեցնել պայմանագիրը, եթե առեւտրային գործունեություն իրականացնողն ապրանքները չառաքի նույնիսկ այդ լրացուցիչ ժամկետի ընթացքում: Այնուամենայնիվ, այս նորմը չպետք է կիրառվի, երբ առեւտրային գործունեություն իրականացնողը միանշանակ հայտարարությամբ հրաժարվել է առաքել ապրանքները: Այն նաեւ չպետք է

կիրառվի որոշակի հանգամանքներում, երբ առաքման ժամկետը կարեւոր է, ինչպես օրինակ՝ հարսանեկան զգեստի դեպքում, որը պետք է առաքվի հարսանիքից առաջ: Այն նաեւ չպետք է կիրառվի այնպիսի հանգամանքներում, երբ սպառողն առեւտրային գործունեություն իրականացնողին տեղեկացնում է, որ կարեւոր է, որ առաքումը կատարվի կոնկրետ օրը: Այս նպատակով սպառողը կարող է օգտագործել առեւտրային գործունեություն իրականացնողի՝ սույն հրահանգին համապատասխան տրամադրված կոնտակտային տվյալները: Այս կոնկրետ դեպքերում, եթե առեւտրային գործունեություն իրականացնողն ապրանքները ժամանակին չի առաքում, սպառողը պետք է իրավունք ունենա նախապես համաձայնեցված առաքման ժամկետը լրանալուց անմիջապես հետո դադարեցնելու պայմանագիրը: Սույն հրահանգը չպետք է հակասի սպառողի կողմից առեւտրային գործունեություն իրականացնողին պայմանագիրը դադարեցնելու իր ցանկության մասին ծանուցելու եղանակի վերաբերյալ ազգային դրույթներին:

53) Ի լրումն առեւտրային գործունեություն իրականացնողի կողմից սույն հրահանգի համաձայն իր պարտավորությունները չկատարելու դեպքում սպառողի՝ պայմանագիրը դադարեցնելու իրավունքի՝ սպառողը կարող է կիրառելի ազգային օրենսդրությանը համապատասխան դիմել իրավական պաշտպանության այլ միջոցների, ինչպես օրինակ՝ առեւտրային գործունեություն իրականացնողին առաքման համար լրացուցիչ ժամկետ շնորհելը, պայմանագրի կատարմանը հարկադրելը, վճարման հետաձգումը եւ վնասի փոխհատուցում պահանջելը:

54) «Ներքին շուկայում վճարային ծառայությունների մասին» Եվրոպական պառլամենտի եւ խորհրդի 2007 թվականի նոյեմբերի 13-ի 2007/64/ԵՀ հրահանգի [(12)]52-րդ հոդվածի 3-րդ կետին համապատասխան՝ անդամ պետությունները պետք է հնարավորություն ունենան արգելելու կամ

[12] ՊՏ L 319, 5.12.2007թ., էջ 1:

սահմանափակելու առեւտրային գործունեություն իրականացնողների՝ սպառողից վճարումներ պահանջելու իրավունքը՝ հաշվի առնելով մրցակցությունը խրախուսելու եւ արդյունավետ վճարային գործիքների օգտագործումը խթանելու անհրաժեշտությունը: Ցանկացած դեպքում առեւտրային գործունեություն իրականացնողներին պետք է արգելվի սպառողից գանձել վճարման որոշ միջոցներ օգտագործելու համար առեւտրային գործունեություն իրականացնողի կրած ծախսը գերազանցող վճարները:

55) Եթե առեւտրային գործունեություն իրականացնողն ապրանքներն առաքում է սպառողին, ապա դրանց կորստի կամ վնասման դեպքում կարող են առաջանալ ռիսկի փոխանցման պահի հետ կապված վեճեր: Հետեւաբար սույն հրահանգով պետք է նախատեսվի, որ սպառողը պաշտպանված լինի ապրանքների կորստի կամ վնասման ցանկացած ռիսկից՝ նախքան ապրանքների ֆիզիկական տնօրինումը ստանձնելը: Սպառողը պետք է պաշտպանված լինի առեւտրային գործունեություն իրականացնողի կողմից կազմակերպված կամ իրականացվող փոխադրման ժամանակ, նույնիսկ եթե սպառողն առեւտրային գործունեություն իրականացնողի կողմից առաջարկված մի շարք տարբերակներից ընտրել է առաքման որեւէ կոնկրետ եղանակ: Այնուամենայնիվ, այդ դրույթը չպետք է կիրառվի այն պայմանագրերի նկատմամբ, որոնցով սպառողն է սեփական հայեցողությամբ որոշում՝ ընդունել առաքված ապրանքները, թե խնդրել փոխադրողին ընդունել դրանք: Ինչ վերաբերում է ռիսկի փոխանցման պահին, ապա համարվում է, որ սպառողը ստանձնել է ապրանքների ֆիզիկական տնօրինումը դրանք ստանալու պահից:

56) Ազգային օրենսդրության համաձայն սպառողի պայմանագրային իրավունքների պաշտպանության հարցում օրինական շահ ունեցող համարվող անձանց կամ կազմակերպություններին պետք է իրավունք տրվի վարույթ հարուցելու դատարանում կամ վարչական մարմնում, որն

իրավասու է որոշումներ կայացնել բողոքների վերաբերյալ կամ համապատասխան իրավական վարույթ հարուցել:

57) Անհրաժեշտ է, որ անդամ պետությունները պատժամիջոցներ սահմանեն սույն հրահանգի դրույթները խախտելու համար եւ ապահովեն դրանց կիրարկումը: Պատժամիջոցները պետք է լինեն արդյունավետ, համաչափ եւ տարհամոզիչ:

58) Սպառողը չպետք է զրկվի սույն հրահանգով տրամադրվող պաշտպանությունից: Եթե պայմանագրի նկատմամբ կիրառելի օրենքը երրորդ երկրի օրենք է, ապա որոշելու համար, թե արդյոք սպառողը պահպանում է սույն հրահանգով տրամադրվող պաշտպանությունը, պետք է կիրառվի թիվ 598/2008 (ԵՀ) կանոնակարգը:

59) Հանձնաժողովն անդամ պետությունների եւ շահագրգիռ կողմերի հետ խորհրդակցելուց հետո պետք է գտնի ամենապատշաճ եղանակը՝ ապահովելու համար, որ բոլոր սպառողները վաճառքի պահին տեղեկացվեն իրենց իրավունքների մասին:

60) Քանի որ անհաղորդ առեւտուրը, որը սպառողներին առանց իրենց պահանջի ապրանքների մատակարարումը կամ ծառայությունների մատուցումն է, արգելված է Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2005 թվականի մայիսի 11-ի՝ «Ներքին շուկայում սպառողների նկատմամբ ձեռնարկությունների անարդար առեւտրային գործելակերպի մասին» թիվ 2005/29/ԵՀ հրահանգով (Անարդար առեւտրային գործելակերպերի մասին հրահանգ) [13], սակայն դրանում պայմանագրային պաշտպանության որեւէ միջոց նախատեսված չէ, անհրաժեշտ է սույն հրահանգում ներկայացնել պայմանագրային իրավական պաշտպանության միջոց, որով սպառողն ազատվում է առանց իր պահանջի այդ մատակարարման կամ մատուցման դիմաց որեւէ փոխհատուցում տրամադրելու պարտավորությունից:

[13] ՊՏ L 149, 11.6.2005թ., էջ 22:

61) Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2002 թվականի հուլիսի 12-ի «Անձնական տվյալների մշակման եւ էլեկտրոնային հաղորդակցության ոլորտում անձեռնմխելիության պաշտպանության մասին» թիվ 2002/58/ԵՀ հրահանգով [14] (Անձեռնմխելիության եւ էլեկտրոնային հաղորդակցության մասին հրահանգ) արդեն իսկ կարգավորվում են առանց պահանջի հաղորդակցությունները, եւ նախատեսվում է սպառողի պաշտպանության բարձր մակարդակ: Հետեւաբար 97/7/ԵՀ հրահանգում նույն խնդրի մասին համապատասխան դրույթների առկայությունն անհրաժեշտ չէ:

62) Նպատակահարմար է, որ Հանձնաժողովը վերանայի սույն հրահանգը, եթե հայտնաբերվեն ներքին շուկայի արգելքներ: Իր վերանայման մեջ Հանձնաժողովը պետք է հատուկ ուշադրություն դարձնի անդամ պետություններին հատուկ ազգային դրույթներ գործողության մեջ թողնելու կամ ներդնելու համար տրամադրված հնարավորություններին, այդ թվում՝ Խորհրդի 1993 թվականի ապրիլի 5-ի «Սպառողական պայմանագրերի անարդար պայմանների մասին» [15]թիվ 93/13/ԵՏՀ հրահանգի եւ Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 1999 թվականի մայիսի 25-ի «Սպառողական ապրանքների վաճառքի որոշակի հայեցակետերի եւ տրամադրվող երաշխիքների մասին» թիվ 1999/44/ԵՀ հրահանգի [16]որոշ ոլորտներում: Այդ վերանայումը կարող է հանգեցնել սույն հրահանգը փոփոխելու վերաբերյալ Հանձնաժողովի կողմից առաջարկության ներկայացման. այդ առաջարկությունը կարող է ներառել Հանձնաժողովի՝ Սպառողական քաղաքականության ռազմավարության պարտավորությունն արտացոլող՝ սպառողների պաշտպանության մասին այլ օրենսդրության փոփոխություններ՝ Միության օրենսդրությունը (acquis) վերանայելու մասով, որպեսզի հնարավոր լինի ապահովել սպառողների համընդհանուր, բարձր մակարդակի պաշտպանություն:

[14] ՊՏ L 201, 31.7.2002թ., էջ 37:
[15] ՊՏ L 95, 21.4.1993թ., էջ 29:
[16] ՊՏ L 171, 7.7.1999թ., էջ 12:

63) 93/13/ԵՏՀ եւ 1999/44/ԵՀ հրահանգներում պետք է փոփոխություններ կատարվեն, որոնցով անդամ պետություններից կպահանջվի Հանձնաժողովին տեղեկացնել որոշ ոլորտներում հատուկ ազգային դրույթներ ընդունելու մասին:

64) 85/577/ԵՏՀ եւ 97/7/ԵՀ հրահանգները պետք է ուժը կորցրած ճանաչվեն:

65) Քանի որ սույն հրահանգի նպատակը, այն է՝ սպառողի պաշտպանության բարձր մակարդակի ապահովման միջոցով նպաստել ներքին շուկայի պատշաճ գործունեությանը, չի կարող բավարար կերպով իրագործվել անդամ պետությունների կողմից եւ հետեւաբար կարող է ավելի լավ իրագործվել Միության մակարդակով, Միությունը կարող է ձեռնարկել միջոցներ՝ «Եվրոպական միության մասին» պայմանագրի 5-րդ հոդվածով սահմանված սուբսիդիարության սկզբունքին համապատասխան: Այդ հոդվածով սահմանված համաչափության սկզբունքին համապատասխան՝ սույն հրահանգը չի նախատեսում ավելին, քան անհրաժեշտ է նշված նպատակն իրագործելու համար:

66) Սույն հրահանգով հարգվում են մասնավորապես «Եվրոպական միության հիմնարար իրավունքների մասին» խարտիայով ճանաչված հիմնարար իրավունքները եւ սկզբունքները:

67) «Բարելավված օրինաստեղծ գործունեության մասին» միջինստիտուցիոնալ համաձայնագրի 34-րդ կետին համապատասխան [17]՝ խրախուսվում է, որ անդամ պետությունները, իրենց եւ Միության շահերից ելնելով, կազմեն իրենց աղյուսակները, որոնք հնարավորինս ցույց կտան սույն հրահանգի եւ փոխատեղման միջոցների միջեւ փոխկապակցվածությունը, եւ հրապարակեն դրանք,

ԸՆԴՈՒՆԵՑԻՆ ՍՈՒՅՆ ՀՐԱՀԱՆԳԸ.

[17] ՊՏ C 321, 31.12.2003թ., էջ 1:

ԳԼՈՒԽ I

ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ, ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԸ

Հոդված 1

Կարգավորման առարկան

Սույն հրահանգի նպատակն է սպառողի պաշտպանության բարձր մակարդակ ապահովելու միջոցով նպաստել ներքին շուկայի պատշաճ գործունեությանը՝ սպառողների եւ առեւտրային գործունեություն իրականացնողների միջեւ կնքված պայմանագրերի վերաբերյալ անդամ պետությունների օրենքները, կանոնակարգերը եւ վարչական դրույթների որոշ հայեցակետեր մոտարկելու միջոցով:

Հոդված 2

Սահմանումները

Սույն հրահանգի նպատակով կիրառվում են հետեւյալ սահմանումները.

1) «սպառող» նշանակում է ցանկացած ֆիզիկական անձ, որը սույն հրահանգով կարգավորվող պայմանագրերում գործում է այն նպատակներով, որոնք դուրս են իր առեւտրային, ձեռնարկատիրական գործունեության, արհեստի կամ մասնագիտական գործունեության շրջանակներից.

2) «Առեւտրային գործունեություն իրականացնող» նշանակում է ցանկացած ֆիզիկական անձ կամ իրավաբանական անձ՝ անկախ նրանից, թե այն

մասնավոր, թե պետական սեփականություն է, որը գործում է, այդ թվում՝ իր անունից կամ իր կողմից գործող ցանկացած այլ անձի միջոցով, սույն հրահանգով կարգավորվող պայմանագրերի մասով իր առեւտրային, ձեռնարկատիրական գործունեության, արհեստի կամ մասնագիտական գործունեության նպատակներով,

3) «ապրանքներ» նշանակում է ցանկացած նյութական շարժական գույք՝ բացառությամբ հարկադիր կատարման կարգով կամ օրենքի ուժով այլ կերպ վաճառվող ապրանքների. սույն հրահանգի իմաստով ջուրը, գազը եւ էլեկտրաէներգիան համարվում են ապրանքներ, եթե դրանք վաճառքի են դրված սահմանափակ ծավալով կամ սահմանված քանակով.

4) «սպառողի մասնագրերին համապատասխան պատրաստված ապրանքներ» նշանակում է ոչ գործարանային արտադրության հավաքովի ապրանքներ, որոնք պատրաստվել են սպառողի անհատական ընտրության կամ որոշման հիման վրա.

5) «առուվաճառքի պայմանագիր» նշանակում է ցանկացած պայմանագիր, որի համաձայն առեւտրային գործունեություն իրականացնողը սպառողին է փոխանցում կամ պարտավորվում է փոխանցել ապրանքների նկատմամբ սեփականության իրավունքը, իսկ սպառողը վճարում կամ պարտավորվում է վճարել դրանց գինը, այդ թվում՝ ցանկացած պայմանագիր, որի առարկան ներառում է ինչպես ապրանքներ, այնպես էլ ծառայություններ.

6) «ծառայությունների մատուցման պայմանագիր» նշանակում է առուվաճառքի պայմանագրից բացի ցանկացած այլ պայմանագիր, որի համաձայն առեւտրային գործունեություն իրականացնողը սպառողին է մատուցում կամ պարտավորվում է մատուցել ծառայություն, իսկ սպառողը վճարում է կամ պարտավորվում է վճարել դրա գինը.

7) «հեռակա պայմանագիր» նշանակում է ապրանքների կամ ծառայությունների մասին առեւտրային գործունեություն իրականացնողի եւ սպառողի միջեւ

հեռակա կարգով կազմակերպվող վաճառքի կամ ծառայությունների մատուցման մեխանիզմի շրջանակներում առանց առեւտրային գործունեություն իրականացնողի եւ սպառողի միաժամանակյա ֆիզիկական ներկայության կնքված ցանկացած պայմանագիր՝ հեռակա հաղորդակցության մեկ կամ մի քանի միջոցների բացառիկ օգտագործմամբ՝ մինչեւ եւ ներառյալ պայմանագրի կնքման պահը.

8) «շենքից դուրս պայմանագիր» նշանակում է առեւտրային գործունեություն իրականացնողի եւ սպառողի միջեւ կնքվող ցանկացած պայմանագիր՝

ա) որը կնքվել է առեւտրային գործունեություն իրականացնողի եւ սպառողի միաժամանակյա ֆիզիկական ներկայությամբ, առեւտրային գործունեություն իրականացնողի ձեռնարկության շենքը չհանդիսացող վայրում,

բ) որի համար սպառողի կողմից առաջարկություն էր ներկայացվել նույն հանգամանքներում, որոնք նշված են «ա» կետում,

գ) կնքվել է առեւտրային գործունեություն իրականացնողի ձեռնարկության շենքում կամ հեռակա հաղորդակցության ցանկացած միջոցով՝ առեւտրային գործունեություն իրականացնողի ձեռնարկության շենքը չհանդիսացող վայրում սպառողին անձամբ եւ անհատապես դիմելուց անմիջապես հետո, վաճառողի եւ սպառողի միաժամանակյա ֆիզիկական ներկայությամբ, կամ

դ) կնքվել է առեւտրային գործունեություն իրականացնողի կողմից ապրանքները կամ ծառայությունները գովազդելու եւ սպառողին վաճառելու նպատակով կամ արդյունքով կազմակերպված շրջայցի ընթացքում.

9) «ձեռնարկության շենք» նշանակում է՝

ա) ցանկացած անշարժ, մանրածախ վաճառքի տարածք, որտեղ առեւտրային գործունեություն իրականացնողը մշտական հիմունքով իրականացնում է իր գործունեությունը, կամ

բ) ցանկացած շարժական, մանրածախ վաճառքի տարածք, որտեղ առեւտրային գործունեություն իրականացնողը մշտական հիմունքով իրականացնում է իր գործունեությունը.

10) «մշտական կրիչ» նշանակում է ցանկացած գործիք, որը սպառողին կամ առեւտրային գործունեություն իրականացնողին հնարավորություն է տալիս անձամբ իրեն հասցեագրված տեղեկությունները հետագա հղումների համար մատչելի ձեւով պահել տեղեկությունների նպատակներին համապատասխան ժամանակահատվածով, եւ որը հնարավոր է դարձնում պահված տեղեկությունների անփոփոխ վերարտադրումը.

11) «թվային բովանդակություն» նշանակում է թվային ձեւով ստեղծված եւ տրամադրված տվյալներ.

12) «ֆինանսական ծառայություն» նշանակում է բանկային, վարկային, ապահովագրական, անհատական կենսաթոշակային, ներդրումային կամ վճարային բնույթի ցանկացած ծառայություն.

13) «հրապարակային աճուրդ» նշանակում է վաճառքի մեթոդ, որտեղ առեւտրային գործունեություն իրականացնողի կողմից ապրանքներ կամ ծառայություններ են առաջարկվում այն սպառողներին, որոնք անձամբ մասնակցում են, կամ որոնց հնարավորություն է տրվել անձամբ մասնակցելու աճուրդին՝ աճուրդի կազմակերպչի կողմից իրականացվող թափանցիկ, մրցակցային սակարկային ընթացակարգի միջոցով, եւ որի ժամանակ հաղթող ճանաչված մասնակիցը պարտավոր է գնել ապրանքները կամ ծառայությունները.

14) «առեւտրային երաշխիք» նշանակում է առեւտրային գործունեություն իրականացնողի կամ արտադրողի (երաշխավորի) կողմից սպառողի նկատմամբ ստանձնած ցանկացած պարտավորություն՝ ի լրումն համապատասխանության երաշխիքի հետ կապված իր իրավական պարտավորության, փոխհատուցելու վճարված գինը կամ փոխարինելու,

վերանորոգելու կամ որեւէ եղանակով սպասարկելու ապրանքները, եթե դրանք չեն համապատասխանում մասնագրերին կամ համապատասխանությանը չառնչվող ցանկացած այլ պահանջի, որը շարադրված է երաշխիքային նամակում կամ պայմանագրի կնքման պահին կամ դրանից առաջ հասանելի համապատասխան գովազդում.

15) «լրացուցիչ պայմանագիր» նշանակում է պայմանագիր, որով սպառողը ձեռք է բերում հեռակա պայմանագրի կամ շենքից դուրս պայմանագրի հետ կապված ապրանքները կամ ծառայությունները, եւ եթե այդ ապրանքները մատակարարվում են կամ ծառայությունները մատուցվում են առեւտրային գործունեություն իրականացնողի կամ երրորդ կողմի կողմից այդ երրորդ կողմի եւ առեւտրային գործունեություն իրականացնողի միջեւ ձեռք բերված պայմանավորվածության հիման վրա:

Հոդված 3

Գործողության ոլորտը

1. Սույն հրահանգը դրա դրույթներով սահմանված պայմաններով եւ չափով կիրառվում է առեւտրային գործունեություն իրականացնողի եւ սպառողի միջեւ կնքված ցանկացած պայմանագրի նկատմամբ: Այն նաեւ կիրառվում է ջրի, գազի, էլեկտրաէներգիայի կամ կենտրոնացված ջեռուցման մատակարարման, այդ թվում՝ հանրային մատակարարների կողմից պայմանագրերի նկատմամբ այնքանով, որքանով այդ ապրանքները տրամադրվում են պայմանագրային հիմունքներով:

2. Եթե սույն հրահանգի որեւէ դրույթ հակասում է Միության այլ՝ որոշակի ոլորտներ կարգավորող ակտի դրույթին, ապա Միության այդ այլ ակտի դրույթը գերակայում է եւ կիրառվում այդ կոնկրետ ոլորտների նկատմամբ:

3. Սույն հրահանգը չի կիրառվում հետեւյալ պայմանագրերի նկատմամբ.

ա) սոցիալական ծառայությունների մատուցման, այդ թվում՝ սոցիալական բնակարանային ապահովման, երեխաների խնամքի եւ մշտապես կամ ժամանակավորապես կարիքավոր ընտանիքներին եւ անձանց օժանդակության, այդ թվում՝ երկարաժամկետ խնամքի ծառայությունների տրամադրման պայմանագրեր,

բ) առողջապահական ծառայությունների մատուցման պայմանագրեր՝ 2011/24/ԵՀ հրահանգի 3-րդ հոդվածի «ա» կետում սահմանված կարգով՝ անկախ նրանից, թե դրանք մատուցվում են առողջապահական հաստատությունների կողմից, թե՝ ոչ,

գ) մոլեխաղերի ծառայությունների մատուցման պայմանագրեր, որոնք ներառում են դրամով գրազի կատարում շահումով խաղերում, այդ թվում՝ վիճակախաղերում, խաղատնային խաղերում եւ խաղադրույքների կատարման գործառնություններում,

դ) ֆինանսական ծառայությունների մատուցման պայմանագրեր,

ե) անշարժ գույքի կամ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների ստեղծման, ձեռքբերման կամ փոխանցման պայմանագրեր,

զ) նոր շենքերի շինարարության, գոյություն ունեցող շենքերի զգալի վերակառուցման եւ բնակվելու նպատակով բնակելի տարածքի վարձակալության պայմանագրեր,

է) Խորհրդի 1990 թվականի հունիսի 13-ի «Փաթեթային ճանապարհորդությունների, փաթեթային արձակուրդների եւ փաթեթային շրջագայությունների մասին» թիվ 90/314/ԵՏՀ հրահանգի շրջանակներում կարգավորվող ծառայությունների մատուցման պայմանագրեր [18],

[18] ՊՏ L 158, 23.6.1990թ., էջ 59:

ը) «Տարաժամկետ (ժամկետային հաջորդականությամբ) օգտագործվող արտադրանքին, երկարաժամկետ արձակուրդի արտադրանքին վերաբերող, վերավաճառքի եւ փոխանակման պայմանագրերի որոշ հայեցակետերի հետ կապված սպառողների պաշտպանության մասին» Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2009 թվականի հունվարի 14-ի 2008/122/ԵՀ հրահանգի շրջանակներում կարգավորվող ծառայությունների մատուցման [19] պայմանագրեր,

թ) պայմանագրեր, որոնք անդամ պետությունների օրենքներին համապատասխան՝ կնքվում են պետական պաշտոն զբաղեցնող անձի կողմից, որն ունի անկախ եւ անաչառ լինելու՝ օրենքով սահմանված պարտավորություն, եւ որը պետք է համապարփակ իրավական տեղեկություններ տրամադրելու միջոցով ապահովի, որ սպառողը պայմանագիրը կնքի միայն մանրակրկիտ իրավական նկատառումների եւ դրա իրավական շրջանակի մասին գիտելիքի հիման վրա,

ժ) կենցաղում ընթացիկ սպառման համար նախատեսված այն սննդամթերքի, խմիչքների կամ այլ ապրանքների մատակարարման պայմանագրեր, որոնք հաճախակի եւ կանոնավոր կերպով ֆիզիկապես մատակարարվում են առեւտրային գործունեություն իրականացնողի կողմից սպառողի տուն, բնակության վայր կամ աշխատավայր,

ժա) ուղեւորափոխադրման ծառայությունների մատուցման պայմանագրեր՝ բացառությամբ 8-հոդվածի 2-րդ կետում եւ 19-րդ եւ 22-րդ հոդվածներում նշվածների,

ժբ) պայմանագրեր, որոնք կնքվել են վաճառքի ավտոմատ սարքերի միջոցով կամ առեւտրային ավտոմատացված տարածքներում,

ժգ) պայմանագրեր, որոնք կնքվել են հեռահաղորդակցության օպերատորների հետ հանրային օգտագործման տաքսոֆոնների

[19] ՊՏ L 33, 3.2.2009թ., էջ 10:

միջոցով դրանց օգտագործման համար կամ կնքվել են սպառողի կողմից հեռախոսով, համացանցով կամ ֆաքսով հաստատված մեկ միասնական կապի օգտագործման համար:

4. Անդամ պետությունները կարող են որոշել չկիրառել սույն հրահանգը կամ չունենալ կամ չներդնել համապատասխան ազգային դրույթներ շենքից դուրս այն պայմանագրերի նկատմամբ, որոնց համար սպառողի կողմից վճարման ենթակա գումարը չի գերազանցում 50 եվրոն: Անդամ պետությունները կարող են իրենց ազգային օրենսդրության մեջ սահմանել ավելի ցածր արժեք:

5. Սույն հրահանգի գործողությունը չի տարածվում ազգային ընդհանուր պայմանագրային իրավունքի վրա, ինչպես օրինակ՝ պայմանագրի վավերականության, կազմման կամ գործողության վերաբերյալ կանոնների վրա, այնքանով, որքանով ընդհանուր պայմանագրային իրավունքի հայեցակետերը չեն կարգավորվում սույն հրահանգով:

6. Սույն հրահանգը չի խոչընդոտում առեւտրային գործունեություն իրականացնողների կողմից սպառողներին այնպիսի պայմանագրային պարտավորություններ առաջարկելը, որոնք դուրս են սույն հրահանգով նախատեսված պաշտպանության շրջանակից:

Հոդված 4

Ներդաշնակեցման մակարդակը

Անդամ պետություններն իրենց ազգային օրենսդրության մեջ չպետք է գործողության մեջ թողնեն կամ ներդնեն սույն հրահանգում սահմանված դրույթներից շեղվող դրույթներ, այդ թվում՝ առավել կամ պակաս խիստ դրույթներ՝ սպառողի պաշտպանության այլ մակարդակ ապահովելու համար, եթե սույն հրահանգով այլ բան նախատեսված չէ:

ԳԼՈՒԽ II

ՀԵՌԱԿԱ ԿԱՄ ՇԵՆՔԻՑ ԴՈՒՐՍ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻՑ ԲԱՑԻ ԱՅԼ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՍՊԱՌՈՂԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդված 5

Հեռակա կամ շենքից դուրս կնքված պայմանագրերից բացի այլ պայմանագրերին տեղեկությունների մասով ներկայացվող պահանջները

1. Նախքան սպառողի՝ հեռակա կամ շենքից դուրս կնքված պայմանագրից բացի այլ պայմանագրով կամ որեւէ համապատասխան առաջարկությամբ պարտավորություն ստանձնելը՝ առեւտրային գործունեություն իրականացնողը պետք է սպառողին հստակ եւ սպառիչ ձեւով տրամադրի հետեւյալ տեղեկությունները, եթե այդ տեղեկություններն արդեն իսկ ակնհայտ չեն համատեքստից.

   ա) ապրանքի կամ ծառայությունների հիմնական բնութագրերն այնքանով, որքանով դրանք համապատասխանում են միջոցին եւ ապրանքին կամ ծառայությանը,

   բ) առեւտրային գործունեություն իրականացնողի անձը , ինչպես օրինակ՝ նրա առեւտրային անվանումը, այն աշխարհագրական հասցեն, որտեղ նա գրանցված է, եւ նրա հեռախոսահամարը,

   գ) ապրանքների կամ ծառայությունների ընդհանուր գինը, ներառյալ՝ հարկերը, կամ եթե ապրանքների կամ ծառայությունների բնույթն այնպիսին է, որ գինը ողջամտորեն հնարավոր չէ նախապես հաշվարկել, այն եղանակը, որով պետք է հաշվարկվի գինը, ինչպես նաեւ կիրառելիության դեպքում՝ բեռնափոխադրման, առաքման մասով

կամ փոստային բոլոր հավելյալ գանձումները, կամ եթե այդ գանձումները ողջամտորեն հնարավոր չէ նախապես հաշվարկել, այն փաստը, որ կարող են վճարման ենթակա լինել այդպիսի հավելյալ ծախսեր,

դ) կիրառելիության դեպքում՝ վճարման, առաքման, կատարման, այն ժամկետի վերաբերյալ պայմանավորվածությունները, որի ընթացքում առեւտրային գործունեություն իրականացնողը պարտավորվում է առաքել ապրանքները կամ մատուցել ծառայությունը, եւ առեւտրային գործունեություն իրականացնողի՝ բողոքները քննելու քաղաքականությունը,

ե) ի լրումն ապրանքների համար համապատասխանության իրավական երաշխիքի առկայության մասին հիշեցման՝ հետվաճառքային ծառայությունների եւ առեւտրային երաշխիքների առկայությունը եւ պայմանները՝ կիրառելիության դեպքում,

զ) պայմանագրի գործողության ժամկետը՝ կիրառելիության դեպքում, կամ եթե պայմանագիրն անժամկետ է, կամ դրա ժամկետը պետք է ինքնաբերաբար երկարաձգվի, ապա պայմանագրի դադարեցման պայմանները,

է) կիրառելիության դեպքում՝ թվային բովանդակության ֆունկցիոնալ հնարավորությունները, այդ թվում՝ կիրառելի տեխնիկական պաշտպանության միջոցները,

ը) կիրառելիության դեպքում՝ թվային բովանդակության համապատասխան փոխգործակցելիությունը սարքաշարի եւ ծրագրաշարի հետ, որի մասին առեւտրային գործունեություն իրականացնողը գիտի, կամ ողջամտորեն ակնկալվում է, որ իմացել է:

2. 1-ին պարբերությունը նաեւ կիրառվում է ջրի, գազի կամ էլեկտրաէներգիայի մատակարարման պայմանագրերի նկատմամբ, եթե դրանք վաճառքի չեն

դրվել սահմանափակ ծավալով կամ սահմանված քանակով, կենտրոնացված ջեռուցման կամ այն թվային բովանդակության վերաբերյալ պայմանագրերի նկատմամբ, որոնք չեն մատակարարվել նյութական միջոցով:

3. Անդամ պետություններից չի պահանջվի 1-ին պարբերությունը կիրառել այն պայմանագրերի նկատմամբ, որոնք ներառում են առօրյա գործարքներ, եւ որոնք կատարվում են անմիջապես դրանց կնքման պահին:

4. Անդամ պետությունները կարող են ընդունել կամ ունենալ նախապայմանագրային տեղեկություններին ներկայացվող լրացուցիչ պահանջներ այն պայմանագրերի համար, որոնց վրա տարածվում է սույն հոդվածի գործողությունը:

ԳԼՈՒԽ III

ՀԵՌԱԿԱ ԵՎ ՇԵՆՔԻՑ ԴՈՒՐՍ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԴԵՊՔՈՒՄ ՍՊԱՌՈՂԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԿԱՏԱՐԵԼՈՒՑ ՀՐԱԺԱՐՎԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ

Հոդված 6

Հեռակա եւ շենքից դուրս կնքված պայմանագրերի մասով տեղեկություններին ներկայացվող պահանջները

1. Նախքան սպառողի՝ հեռակա կամ շենքից դուրս կնքված պայմանագրից բացի այլ պայմանագրով կամ որեւէ համապատասխան առաջարկությամբ պարտավորություն ստանձնելը՝ առեւտրային գործունեություն իրականացնողը պետք է սպառողին հստակ եւ սպառիչ ձեւով տրամադրի հետեւյալ տեղեկությունները.

ա) ապրանքների կամ ծառայությունների հիմնական բնութագրերն այնքանով, որքանով դրանք համապատասխանում են միջոցին եւ ապրանքներին կամ ծառայություններին,

բ) առեւտրային գործունեություն իրականացնողի անձը, ինչպես օրինակ՝ առեւտրային անվանումը,

գ) աշխարհագրական հասցեն, որտեղ գրանցված է առեւտրային գործունեություն իրականացնողը, եւ առեւտրային գործունեություն իրականացնողի հեռախոսահամարը, ֆաքսի համարը եւ էլեկտրոնային փոստի հասցեն՝ առկայության դեպքում, սպառողին հնարավորություն տալու համար արագ կապ հաստատելու առեւտրային գործունեություն իրականացնողի հետ եւ արդյունավետորեն հաղորդակցվելու նրա հետ, եւ կիրառելիության դեպքում՝ այն առեւտրային գործունեություն իրականացնողի աշխարհագրական հասցեն եւ անձը, որի անունից նա գործում է,

դ) առեւտրային գործունեություն իրականացնողի գործունեության վայրի աշխարհագրական հասցեն, եթե այն տարբերվում է «գ» կետին համապատասխան տրամադրված հասցեից, եւ կիրառելիության դեպքում՝ այն առեւտրային գործունեություն իրականացնողի աշխարհագրական հասցեն, որի անունից նա գործում է, որտեղ սպառողը կարող է հասցեագրել ցանկացած բողոք,

գ) ապրանքների կամ ծառայությունների ընդհանուր գինը, ներառյալ՝ հարկերը, կամ եթե ապրանքների կամ ծառայությունների բնույթն այնպիսին է, որ դրանց գինը ողջամտորեն հնարավոր չէ նախապես հաշվարկել, այն եղանակը, որով պետք է հաշվարկվի գինը, ինչպես նաեւ կիրառելիության դեպքում՝ բեռնափոխադրման, առաքման մասով կամ փոստային բոլոր հավելյալ գանձումները կամ ցանկացած այլ ծախս, կամ եթե ողջամտորեն հնարավոր չէ այդ վճարները նախապես

հաշվարկել, այն փաստը, որ կարող են վճարման ենթակա լինել այդպիսի հավելյալ ծախսեր: Անժամկետ պայմանագրերի կամ բաժանորդագրություն պարունակող պայմանագրերի դեպքում ընդհանուր գինը ներառում է հաշվի ներկայացման ժամկետի ընթացքում ընդհանուր ծախսերը: Եթե այդպիսի պայմանագրերի համար գանձումը կատարվում է սահմանված դրույքաչափով, ապա ընդհանուր գին նաեւ նշանակում է ամսական ընդհանուր ծախսերը: Եթե ընդհանուր ծախսերը ողջամտորեն չեն կարող նախապես հաշվարկվել, ապա սահմանվում է այն եղանակը, որով պետք է գինը հաշվարկվի,

է) պայմանագիր կնքելու համար հեռակա հաղորդակցության միջոցն օգտագործելու արժեքը, եթե այդ արժեքը հաշվարկվում է այլ կերպ, քան հիմնական դրույքաչափով,

ը) վճարման, առաքման, կատարման, այն ժամկետի վերաբերյալ պայմանավորվածությունները, որի ընթացքում առեւտրային գործունեություն իրականացնողը պարտավորվում է առաքել ապրանքները կամ մատուցել ծառայությունները, եւ կիրառելիության դեպքում՝ առեւտրային գործունեություն իրականացնողի՝ բողոքները քննելու քաղաքականությունը,

թ) պայմանագիրը կատարելուց հրաժարվելու իրավունքի առկայության դեպքում՝ այդ իրավունքն իրացնելու պայմանները, ժամկետները եւ ընթացակարգերը՝ 11-րդ հոդվածի 1-ին կետին համապատասխան, ինչպես նաեւ I հավելվածի «Բ» մասով սահմանված՝ պայմանագիրը կատարելուց հրաժարվելու օրինակելի ձեւը,

ժ) կիրառելիության դեպքում՝ այն փաստը, որ պայմանագիրը կատարելուց հրաժարվելու դեպքում սպառողը ստիպված կլինի կրելու ապրանքները վերադարձնելու ծախսերը, իսկ հեռակա պայմանագրերի դեպքում, եթե

ապրանքներն իրենց բնույթից ելնելով որպես կանոն չեն կարող վերադարձվել փոստով, ապա ապրանքները վերադարձնելու արժեքը,

ժա) այն փաստը, որ եթե սպառողը պայմանագիրը կատարելուց հրաժարվելու իր իրավունքն իրացնում է 7-րդ հոդվածի 3-րդ կետին կամ 8-րդ հոդվածի 8-րդ կետին համապատասխան պահանջ ներկայացնելուց հետո, ապա սպառողը պարտավորված կլինի առեւտրային գործունեություն իրականացնողին վճարել ողջամիտ ծախսեր՝ 14-րդ հոդվածի 3-րդ կետին համապատասխան,

ժբ) եթե պայմանագիրը կատարելուց հրաժարվելու իրավունքը նախատեսված չէ 16-րդ հոդվածին համապատասխան, ապա այն տեղեկությունը, որ սպառողը չի օգտվի պայմանագիրը կատարելուց հրաժարվելու իրավունքից, կամ կիրառելիության դեպքում՝ այն հանգամանքները, որոնց դեպքում սպառողը կորցնում է պայմանագիրը կատարելուց հրաժարվելու իր իրավունքը,

ժգ) հիշեցում՝ ապրանքների համապատասխանության իրավական երաշխիքի առկայության մասին,

ժդ) կիրառելիության դեպքում՝ սպառողին հետվաճառքային աջակցության, հետվաճառքային ծառայությունների եւ առեւտրային երաշխիքների առկայությունը եւ պայմանները,

ժե) 2005/29/ԵՀ հրահանգի 2-րդ հոդվածի «զ» կետով սահմանված՝ վարքագծի համապատասխան կանոնների առկայությունը եւ թե կիրառելիության դեպքում ինչպես կարելի է ձեռք բերել դրանց պատճենները,

ժզ) պայմանագրի գործողության ժամկետը՝ կիրառելիության դեպքում, կամ եթե պայմանագիրն անժամկետ է, կամ դրա ժամկետը պետք է ինքնաբերաբար երկարաձգվի, ապա պայմանագիրը դադարեցնելու պայմանները,

ժէ) կիրառելիության դեպքում՝ սպառողի պարտավորությունների՝ պայմանագրով սահմանված նվազագույն տեւողությունը,

ժը) կիրառելիության դեպքում՝ առեւտրային գործունեություն իրականացնողի պահանջով սպառողի կողմից վճարման ենթակա կամ տրամադրվող դեպոզիտների կամ այլ ֆինանսական երաշխիքների առկայությունը եւ պայմանները,

ժթ) կիրառելիության դեպքում՝ թվային բովանդակության ֆունկցիոնալ հնարավորությունները, այդ թվում՝ տեխնիկական պաշտպանության կիրառելի միջոցները,

ի) կիրառելիության դեպքում՝ թվային բովանդակության ցանկացած համապատասխան փոխգործակցելիություն սարքաշարի եւ ծրագրաշարի հետ, որի մասին առեւտրային գործունեություն իրականացնողը գիտի կամ ողջամտորեն ակնկալվում է, որ իմացել է,

իա) կիրառելիության դեպքում՝ բողոքների ներկայացման եւ փոխհատուցման արտադատական մեխանիզմից օգտվելու հնարավորությունը, որին ենթակա է առեւտրային գործունեություն իրականացնողը, եւ դրան մատչելիության մեթոդները:

2. 1-ին պարբերությունը նաեւ կիրառվում է ջրի, գազի կամ էլեկտրաէներգիայի մատակարարման պայմանագրերի նկատմամբ, եթե դրանք վաճառքի չեն դրվել սահմանափակ ծավալով կամ սահմանված քանակով, կենտրոնացված ջեռուցման կամ այն թվային բովանդակության վերաբերյալ պայմանագրերի նկատմամբ, որոնք չեն մատակարարվել նյութական միջոցով:

3. Հրապարակային աճուրդի դեպքում 1-ին պարբերության «բ», «գ» եւ «դ» կետերում նշված տեղեկությունները կարող են փոխարինվել աճուրդի կազմակերպչի մասով համարժեք տվյալներով:

4. 1-ին պարբերության «ը», «թ» եւ «ժ» կետերում նշված տեղեկությունները կարող են տրամադրվել I հավելվածի «Ա» մասում սահմանված՝

պայմանագրերը կատարելուց հրաժարվելու տիպային հրահանգների միջոցով: Առեւտրային գործունեություն իրականացնողն 1-ին պարբերության «ը», «թ» եւ «ժ» կետերում նշված տեղեկություններին ներկայացվող պահանջները կատարում է, եթե նա այդ հրահանգները ճշգրտորեն լրացված ներկայացրել է սպառողին:

5. 1-ին պարբերության մեջ նշված տեղեկությունները հեռակա կամ շենքից դուրս կնքված պայմանագրերի անբաժանելի մասն են կազմում եւ չեն փոփոխվում, եթե պայմանավորվող կողմերը բացահայտ այլ համաձայնություն ձեռք չեն բերում:

6. Եթե առեւտրային գործունեություն իրականացնողը չի կատարել 1-ին պարբերության «ե» կետում նշված՝ հավելյալ վճարների կամ այլ ծախսերի մասով կամ 1-ին պարբերության «թ» կետում նշված՝ ապրանքները վերադարձնելու արժեքի մասին տեղեկություններին ներկայացվող պահանջները, ապա սպառողը չի կատարի այդ գանձումները կամ ծախսերը:

7. Անդամ պետությունները կարող են իրենց ազգային օրենսդրության մեջ գործողության մեջ թողնել կամ ներդնել պայմանագրային տեղեկություններին ներկայացվող լեզվական պահանջներ, որպեսզի ապահովեն, որ այդ տեղեկությունները սպառողի կողմից հեշտ հասկանալի լինեն:

8. Սույն հրահանգով սահմանված՝ տեղեկություններին ներկայացվող պահանջները լրացնում են 2006/123/ԵՀ եւ 2000/31/ԵՀ հրահանգներում պարունակվող՝ տեղեկություններին ներկայացվող պահանջներին եւ չեն խոչընդոտում, որ անդամ պետություններն այդ հրահանգներին համապատասխան սահմանեն տեղեկություններին ներկայացվող լրացուցիչ պահանջներ:

Չհակասելով առաջին ենթապարբերությանը, եթե 2006/123/ԵՀ կամ 2000/31/ԵՀ հրահանգների՝ տեղեկությունների բովանդակության եւ տրամադրման ձեւի մասին դրույթը հակասում է սույն հրահանգի դրույթին, ապա գերակայում է սույն հրահանգի դրույթը:

9. Ինչ վերաբերում է սույն գլխում սահմանված՝ տեղեկություններին ներկայացվող պահանջներին համապատասխանությանը, ապա ապացուցման բեռն առեւտրային գործունեություն իրականացնողի վրա է:

Հոդված 7

Շենքից դուրս կնքված պայմանագրերի ձեւին ներկայացվող պահանջները

1. Շենքից դուրս կնքված պայմանագրերի մասով առեւտրային գործունեություն իրականացնողը սպառողին թղթային կրիչով, կամ եթե սպառողը համաձայնում է՝ այլ մշտական կրիչով տրամադրում է 6-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված տեղեկությունները: Այդ տեղեկությունները պետք է լինեն ընթեռնելի եւ ձեւակերպված պարզ, հասկանալի լեզվով:

2. Առեւտրային գործունեություն իրականացնողը սպառողին թղթային կրիչով, կամ եթե սպառողը համաձայնում է՝ այլ մշտական կրիչով տրամադրում է ստորագրված պայմանագրի պատճենը կամ պայմանագրի հաստատումը, այդ թվում, եթե կիրառելի է, 16-րդ հոդվածի «ժգ» կետին համապատասխան՝ սպառողի հստակ նախնական համաձայնության եւ ծանուցման հաստատումը:

3. Եթե սպառողը ցանկանում է, որ ծառայությունների մատուցումը կամ ջրի, գազի կամ էլեկտրաէներգիայի մատակարարումը, եթե դրանք վաճառքի չեն դրվել սահմանափակ ծավալով կամ սահմանված քանակով, կամ կենտրոնացված ջեռուցման մատակարարումը սկսվի 9-րդ հոդվածի 2-րդ

կետով նախատեսված՝ պայմանագիրը կատարելուց հրաժարվելու ժամկետի ընթացքում, ապա առեւտրային գործունեություն իրականացնողը սպառողից պահանջում է մշտական կրիչով այդ մասին հստակ պահանջ ներկայացնել:

4. Ինչ վերաբերում է շենքից դուրս կնքված պայմանագրերին, որոնցում սպառողը բացահայտ պահանջել է վերանորոգումներ կամ սպասարկում իրականացնելու նպատակով առեւտրային գործունեություն իրականացնողի կողմից ծառայությունների մատուցում, որի համար առեւտրային գործունեություն իրականացնողը եւ սպառողն անմիջապես կատարում են իրենց պայմանագրային պարտավորությունները, եւ եթե սպառողի կողմից վճարման ենթակա գումարը չի գերազանցում 200 եվրոն՝

ա) առեւտրային գործունեություն իրականացնողը սպառողին թղթային կրիչով, կամ եթե սպառողը համաձայն է՝ այլ մշտական կրիչով տրամադրում է 6-րդ հոդվածի 1-ին կետի «բ» եւ «գ» ենթակետերում նշված տեղեկությունները եւ ընդհանուր գնի նախահաշվի հետ միասին գնի կամ այն եղանակի մասին տեղեկություններ, որով պետք է հաշվարկվի գինը: Առեւտրային գործունեություն իրականացնողը տրամադրում է 6-րդ հոդվածի 1-ին կետի «ա», «ը» եւ «ժա» ենթակետերում նշված տեղեկությունները, սակայն կարող է որոշել դրանք չտրամադրել թղթային կրիչով կամ այլ մշտական կրիչով, եթե սպառողը բացահայտ համաձայնում է,

բ) սույն հոդվածի 2-րդ պարբերությանը համապատասխան տրամադրված պայմանագրի հաստատումը պարունակում է 6-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված տեղեկությունները:

Անդամ պետությունները կարող են որոշել չկիրառել այս պարբերությունը:

5. Անդամ պետությունները նախապայմանագրային տեղեկությունների ձեւին ներկայացվող հետագա պահանջներ չեն սահմանում սույն հրահանգում սահմանված՝ տեղեկությունները ներկայացնելու մասով պարտավորությունների կատարման համար:

Հոդված 8

Հեռակա պայմանագրերի ձեւին ներկայացվող պահանջները

1. Հեռակա պայմանագրերի առնչությամբ առեւտրային գործունեություն իրականացնողը տրամադրում է 6-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված տեղեկությունները կամ այդ տեղեկությունները հասանելի է դարձնում սպառողին պարզ եւ հասկանալի լեզվով օգտագործվող՝ հեռակա հաղորդակցության միջոցներին համապատասխան եղանակով: Քանի որ այդ տեղեկությունները տրամադրվում են մշտական կրիչով, դրանք պետք է լինեն ընթեռնելի:

2. Եթե էլեկտրոնային եղանակով կնքվելիք հեռակա պայմանագրով սպառողի վրա դրվում է վճարելու պարտավորություն, ապա առեւտրային գործունեություն իրականացնողը սպառողին հստակ եւ տեսանելի ձեւով եւ անմիջապես՝ մինչեւ սպառողի կողմից պատվերի տեղադրումը, պետք է տեղեկացնի 6-րդ հոդվածի 1-ին կետի «ա», «ե», «ժե» եւ «ժզ» ենթակետերով նախատեսված տեղեկությունները:

   Առեւտրային գործունեություն իրականացնողն ապահովում է, որ սպառողն իր պատվերը տեղադրելիս բացահայտ ընդունի, որ պատվերը ենթադրում է վճարման պարտավորություն: Եթե պատվերի տեղադրումը կատարվում է կոճակի ակտիվացման կամ համանման գործառույթի միջոցով, ապա կոճակը կամ համանման գործառույթը պետք է դյուրընթեռնելի եղանակով պիտակավորված լինի միայն «վճարման պարտավորությամբ պատվեր» բառերով կամ համապատասխան ոչ երկիմաստ ձեւակերպմամբ, որով նշվում է, որ պատվերի տեղադրումն առաջացնում է առեւտրային գործունեություն իրականացնողին վճարելու պարտավորություն: Եթե առեւտրային գործունեություն իրականացնողը չի կատարել սույն ենթապարբերությամբ սահմանված պահանջը, ապա սպառողը պայմանագրով կամ պատվերով որեւէ պարտավորություն չի կրում:

3. Առուվաճառքի կայքերում ամենաուշը պատվիրման գործընթացի սկզբում հստակ եւ ընթեռնելի ձեւով նշվում է, թե արդյոք գործում է առաքման որեւէ սահմանափակում, եւ թե վճարման որ միջոցներն են ընդունվում:

4. Եթե պայմանագիրը կնքվում է հեռակա հաղորդակցության միջոցով, որը թույլատրում է տեղեկությունները ցուցադրել սահմանափակ տարածության մեջ կամ ժամանակում, ապա առեւտրային գործունեություն իրականացնողն այդ կոնկրետ միջոցով մինչեւ այդպիսի պայմանագիր կնքելը ներկայացնում է առնվազն նախապայմանագրային տեղեկություններ ապրանքների կամ ծառայությունների հիմնական բնութագրերի, առեւտրային գործունեություն իրականացնողի անձի, ընդհանուր գնի, պայմանագիրը կատարելուց հրաժարվելու իրավունքի, պայմանագրի ժամկետի, եւ եթե պայմանագիրն անժամկետ է, պայմանագիրը դադարեցնելու պայմանների մասին՝ 6-րդ հոդվածի 1-ին կետի «ա», «բ», «ե», «ը» եւ «ժե» ենթակետերում նշված կարգով: 6-րդ հոդվածի 1-ին կետում նշված մյուս տեղեկություններն առեւտրային գործունեություն իրականացնողի կողմից սպառողին տրամադրվում են պատշաճ եղանակով՝ սույն հոդվածի 1-ին պարբերությանը համապատասխան:

5. Չհակասելով 4-րդ պարբերությանը, եթե առեւտրային գործունեություն իրականացնողը հեռախոսազանգ է կատարում սպառողին՝ հեռակա պայմանագիր կնքելու նպատակով, ապա նա պետք է սպառողի հետ զրույցի սկզբում բացահայտի իր անձը եւ կիրառելիության դեպքում՝ այն անձի ինքնությունը, որի անունից նա կատարում է հեռախոսազանգը, եւ հեռախոսազանգի առեւտրային նպատակը:

6. Եթե հեռակա պայմանագիրը պետք է կնքվի հեռախոսով, ապա անդամ պետությունները կարող են նախատեսել, որ առեւտրային գործունեություն իրականացնողը պետք է առաջարկի մասին հաստատում ներկայացնի սպառողին, որը պարտավորություն կստանձնի միայն առաջարկը ստորագրելուց կամ իր գրավոր համաձայնությունն ուղարկելուց հետո:

Անդամ պետությունները կարող են նաեւ նախատեսել, որ այդ հաստատումները պետք է կատարվեն մշտական կրիչով:

7. Առեւտրային գործունեություն իրականացնողը պայմանագրի կնքման հաստատումը սպառողին տրամադրում է մշտական կրիչով հեռակա պայմանագիրը կնքելուց հետո՝ ողջամիտ ժամկետում եւ ամենաուշը ապրանքների առաքման պահին կամ մինչեւ ծառայությունների մատուցումը սկսելը: Հաստատումը ներառում է՝

   ա) 6-րդ հոդվածի 1-ին կետում նշված բոլոր տեղեկությունները, եթե առեւտրային գործունեություն իրականացնողն արդեն իսկ այդ տեղեկությունները մշտական կրիչի վրա չի տրամադրել սպառողին մինչեւ հեռակա պայմանագրի կնքումը, եւ

   բ) կիրառելիության դեպքում՝ սպառողի նախնական բացահայտ համաձայնության եւ ծանուցման հաստատումը՝ 16-րդ հոդվածի «ժգ» կետին համապատասխան:

8. Եթե սպառողը ցանկանում է, որ ծառայությունների մատուցումը կամ ջրի, գազի կամ էլեկտրաէներգիայի մատակարարումը, եթե դրանք վաճառքի չեն դրվել սահմանափակ ծավալով կամ սահմանված քանակով, կամ կենտրոնացված ջեռուցման մատակարարումը սկսվի 9-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված՝ պայմանագիրը կատարելուց հրաժարվելու ժամկետի ընթացքում, ապա առեւտրային գործունեություն իրականացնողը սպառողից պահանջում է, որ նա այդ մասին բացահայտ պահանջ ներկայացնի:

9. Սույն հոդվածը չի հակասում 2000/31/ԵՀ հրահանգի 9-րդ եւ 11-րդ հոդվածներով սահմանված՝ էլեկտրոնային պայմանագրերի կնքման եւ էլեկտրոնային պատվերների տեղադրման մասին դրույթներին:

10. Անդամ պետությունները նախապայմանագրային տեղեկությունների ձեւին ներկայացվող հետագա պահանջներ չեն սահմանում սույն հրահանգում սահմանված՝ տեղեկություններ ներկայացնելու պարտավորությունները կատարելու համար:

Հոդված 9

Պայմանագիրը կատարելուց հրաժարվելու իրավունքը

1. Բացառությամբ այն դեպքերի, երբ կիրառվում են 16-րդ հոդվածով նախատեսված բացառությունները, սպառողն ունի 14-օրյա ժամկետ՝ հեռակա կամ շենքից դուրս պայմանագիրն առանց որեւէ հիմնավորման եւ առանց 13-րդ հոդվածի 2-րդ կետով եւ 14-րդ հոդվածով նախատեսված ծախսերից բացի այլ ծախսեր կրելու կատարելուց հրաժարվելու համար:

2. Չխախտելով 10-րդ հոդվածը՝ սույն հոդվածի 1-ին պարբերության մեջ նշված՝ պայմանագիրը կատարելուց հրաժարվելու ժամկետը լրանում է հետեւյալ ժամանակահատվածներից 14 օր հետո՝

   ա) ծառայությունների մատուցման պայմանագրերի դեպքում՝ պայմանագիրը կնքելու օրը,

   բ) առուվաճառքի պայմանագրերի դեպքում՝ այն օրը, երբ սպառողը կամ փոխադրողից բացի այլ եւ սպառողի կողմից նշված երրորդ կողմը ստանձնում է ապրանքների ֆիզիկական տնօրինումը, կամ

      i) սպառողի կողմից մեկ պատվերի շրջանակներում մի քանի ապրանք պատվիրելու եւ դրանք առանձին առաքելու դեպքում՝ այն օրը, երբ սպառողը կամ փոխադրողից բացի այլ եւ սպառողի կողմից նշված երրորդ կողմը ստանձնում է վերջին ապրանքի ֆիզիկական տնօրինումը,

      ii) մի քանի խմբաքանակից կամ կտորից բաղկացած ապրանքի առաքման դեպքում՝ այն օրը, երբ սպառողը կամ փոխադրողից բացի այլ եւ սպառողի կողմից նշված երրորդ կողմը ստանձնում է ապրանքի վերջին խմբաքանակի կամ կտորի ֆիզիկական տնօրինումը,

iii) սահմանված ժամկետի ընթացքում ապրանքների կանոնավոր առաքման դեպքում՝ այն օրը, երբ սպառողը կամ փոխադրողից բացի այլ եւ սպառողի կողմից նշված երրորդ կողմը ստանձնում է առաջին ապրանքի ֆիզիկական տնօրինումը,

գ) ջրի, գազի կամ էլեկտրաէներգիայի մատակարարման պայմանագրերի դեպքում, եթե դրանք վաճառքի չեն դրվել սահմանափակ ծավալով կամ սահմանված քանակով, կենտրոնացված ջեռուցման կամ այն թվային բովանդակության պայմանագրերի դեպքում, որոնք չեն մատակարարվում նյութական կրիչով՝ պայմանագիրը կնքելու օրը:

3. Անդամ պետությունները չեն արգելում պայմանավորվող կողմերին կատարել իրենց պայմանագրային պարտավորությունները պայմանագիրը կատարելուց հրաժարվելու ժամկետում: Այնուամենայնիվ, շենքից դուրս կնքված պայմանագրերի դեպքում անդամ պետությունները կարող են պահպանել գործող ազգային օրենսդրությունը, որով առեւտրային գործունեություն իրականացնողին արգելվում է սպառողից վճար գանձել պայմանագիրը կնքելուց հետո տվյալ ժամկետի ընթացքում:

Հոդված 10

Պայմանագիրը կատարելուց հրաժարվելու վերաբերյալ տեղեկությունների բացակայությունը

1. Եթե առեւտրային գործունեություն իրականացնողը սպառողին 6-րդ հոդվածի 1-ին կետի «ը» ենթակետով պահանջվող կարգով չի տրամադրել պայմանագիրը կատարելուց հրաժարվելու իրավունքի մասին տեղեկություններ, ապա պայմանագիրը կատարելուց հրաժարվելու ժամկետը կլրանա պայմանագիրը կատարելուց հրաժարվելու նախնական ժամկետի ավարտից 12 ամիս հետո՝ 9-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված կարգով:

2. Եթե առեւտրային գործունեություն իրականացնողը սպառողին 9-րդ հոդվածի 2-րդ կետում նշված օրվանից հետո 12 ամսվա ընթացքում տրամադրել է սույն հոդվածի 1-ին պարբերությամբ նախատեսված տեղեկությունները, ապա պայմանագիրը կատարելուց հրաժարվելու ժամկետը կավարտվի սպառողի կողմից այդ տեղեկությունները ստանալու օրվանից 14 օր հետո:

Հոդված 11

Պայմանագիրը կատարելուց հրաժարվելու իրավունքի իրացումը

1. Պայմանագիրը կատարելուց հրաժարվելու ժամկետը լրանալուց հետո սպառողն առեւտրային գործունեություն իրականացնողին տեղեկացնում է պայմանագիրը կատարելուց հրաժարվելու իր որոշման մասին: Այդ նպատակով սպառողը կարող է կամ՝

   ա) օգտագործել I հավելվածի «Բ» բաժնով սահմանված՝ պայմանագիրը կատարելուց հրաժարվելու օրինակելի ձեւը, կամ

   բ) պայմանագիրը կատարելուց հրաժարվելու իր որոշման մասին ցանկացած այլ միանշանակ հայտարարություն կատարել:

   Անդամ պետությունները չեն նախատեսում պայմանագիրը կատարելուց հրաժարվելու օրինակելի ձեւի նկատմամբ կիրառելի՝ I հավելվածի «Բ» բաժնով սահմանված՝ ձեւին վերաբերող պահանջներից բացի այլ պահանջ:

2. Սպառողի կողմից 9-րդ հոդվածի 2-րդկետում եւ 10-րդ հոդվածում նշված՝ պայմանագիրը կատարելուց հրաժարվելու ժամկետում պայմանագիրը կատարելուց հրաժարվելու իրավունքն իրացված է, եթե պայմանագիրը կատարելուց հրաժարվելու իրավունքի իրացմանը վերաբերող հաղորդագրությունը սպառողի կողմից ուղարկվում է մինչեւ այդ ժամկետի լրանալը:

3. Առեւտրային գործունեություն իրականացնողը կարող է, ի լրումն 1-ին պարբերության մեջ նշված հնարավորությունների, սպառողին հնարավորություն տալ էլեկտրոնային եղանակով լրացնել եւ առեւտրային գործունեություն իրականացնողի կայքում ներկայացնել կա՛մ I հավելվածի «Բ» բաժնով սահմանված՝ պայմանագիրը կատարելուց հրաժարվելու օրինակելի ձեւը, կա՛մ ցանկացած այլ միանշանակ հայտարարություն: Այդ դեպքերում առեւտրային գործունեություն իրականացնողն անհապաղ սպառողին մշտական կրիչով կուղարկի պայմանագիրը կատարելուց հրաժարվելու մասին հայտարարությունը ստանալու հաստատումը:

4. Սույն հոդվածին համապատասխան պայմանագիրը կատարելուց հրաժարվելու իրավունքն իրացնելու ապացուցման բեռը կրում է սպառողը:

Հոդված 12

Պայմանագիրը կատարելուց հրաժարվելու հետեւանքները

Պայմանագիրը կատարելուց հրաժարվելու իրավունքի իրացմամբ կդադարեցվեն կողմերի պարտավորությունները՝

ա) կատարելու հեռակա կամ շենքից դուրս կնքված պայմանագիրը, կամ

բ) կնքելու հեռակա կամ շենքից դուրս կնքված պայմանագիր՝ սպառողի կողմից առաջարկ ներկայացված լինելու դեպքում:

Հոդված 13

Առեւտրային գործունեություն իրականացնողի պարտավորությունները պայմանագիրը կատարելուց հրաժարվելու դեպքում

1. Առեւտրային գործունեություն իրականացնողը փոխհատուցում է սպառողից ստացված բոլոր վճարները, այդ թվում, եթե կիրառելի է՝ առաքման ծախսերը՝ առանց անհարկի ուշացման եւ ամեն դեպքում ոչ ուշ, քան 11-րդ հոդվածին համապատասխան պայմանագիրը կատարելուց հրաժարվելու՝ սպառողի որոշման մասին տեղեկանալու օրվանից 14 օր հետո:

   Առեւտրային գործունեություն իրականացնողը կատարում է առաջին ենթապարբերության մեջ նշված փոխհատուցումը՝ օգտագործելով նույն վճարային միջոցները, ինչ սպառողն է օգտագործել նախնական գործարքի համար, եթե սպառողը բացահայտ այլ համաձայնություն չի տվել, եւ պայմանով, որ այդ փոխհատուցման արդյունքում սպառողը չի կատարում որեւէ վճար:

2. Չնայած 1-ին պարբերությանը՝ առեւտրային գործունեություն իրականացնողից չի պահանջվի փոխհատուցել հավելյալ ծախսերը, եթե սպառողը բացահայտ նախընտրել է առեւտրային գործունեություն իրականացնողի կողմից առաջարկված՝ ստանդարտ առաքման ամենաէժան տեսակից բացի այլ առաքման տեսակ:

3. Եթե առուվաճառքի պայմանագրերի մասով առեւտրային գործունեություն իրականացնողն անձամբ չի առաջարկել ապրանքներն ինքնուրույն վերցնել, ապա առեւտրային գործունեություն իրականացնողը կարող է հետաձգել փոխհատուցման կատարումը մինչեւ ապրանքները հետ ստանալը, կամ մինչեւ սպառողը ներկայացնի ապրանքները հետ ուղարկելու մասին ապացույցներ՝ կախված այն հանգամանքից, թե որն ավելի շուտ տեղի կունենա:

Հոդված 14

Սպառողի պարտավորությունները պայմանագիրը կատարելուց հրաժարվելու դեպքում

1. Եթե առեւտրային գործունեություն իրականացնողը չի առաջարկել ապրանքներն ինքնուրույն վերցնել, ապա սպառողն ապրանքները վերադարձնում է կամ դրանք հանձնում է առեւտրային գործունեություն իրականացնողին կամ առեւտրային գործունեություն իրականացնողի կողմից ապրանքները ստանալու համար լիազորված անձին՝ առանց անհարկի ուշացման եւ ամեն դեպքում ոչ ուշ, քան 11-րդ հոդվածին համապատասխան պայմանագիրը կատարելուց հրաժարվելու իր որոշման մասին առեւտրային գործունեություն իրականացնողին հայտնելու օրվանից 14 օր հետո: Վերջնաժամկետը համարվում է պահպանված, եթե սպառողն ապրանքները վերադարձնում է մինչեւ 14-օրյա ժամկետի ավարտը:

   Սպառողը կրում է միայն ապրանքները վերադարձնելու անմիջական ծախսերը, եթե առեւտրային գործունեություն իրականացնողը չի համաձայնել դրանք կրել, կամ եթե առեւտրային գործունեություն իրականացնողը չի տեղեկացրել սպառողին, որ նա պետք է կրի այդ ծախսերը: Շենքից դուրս կնքված պայմանագրերի դեպքում, եթե ապրանքներն առաքվել են սպառողի տուն պայմանագրի կնքման պահին, առեւտրային գործունեություն իրականացնողն իր հաշվին վերցնում է ապրանքները, եթե այդ ապրանքներն իրենց բնույթով, որպես կանոն, չեն կարող վերադարձվել փոստով:

2. Սպառողը պատասխանատվություն է կրում միայն ապրանքները դրանց բնույթը, բնութագրերը եւ ֆունկցիոնալ հնարավորությունները որոշելու համար անհրաժեշտ եղանակով տնօրինելուց բացի այլ կերպ տնօրինելու արդյունքում դրանց արժեքի ցանկացած նվազման չափով: Սպառողը ոչ մի

դեպքում պատասխանատվություն չի կրում ապրանքների նվազած արժեքի համար, եթե առեւտրային գործունեություն իրականացնողը 6-րդ հոդվածի 1-ին կետի «ը» ենթակետին համապատասխան չի ներկայացրել պայմանագիրը կատարելուց հրաժարվելու իրավունքի վերաբերյալ ծանուցում:

3. Եթե սպառողը 7-րդ հոդվածի 1-ին կետին կամ 8-րդ հոդվածի 8-րդ կետին համապատասխան հարցում կատարելուց հետո օգտվում է պայմանագիրը կատարելուց հրաժարվելու իր իրավունքից, ապա սպառողն առեւտրային գործունեություն իրականացնողին վճարում է գումար, որը համաչափ է այն ապրանքներին, որոնք տրամադրվել են մինչեւ սպառողի կողմից առեւտրային գործունեություն իրականացնողին պայմանագիրը կատարելուց հրաժարվելու իր իրավունքից օգտվելու մասին տեղեկացնելը՝ պայմանագրի ամբողջական ծածկույթի համեմատ: Սպառողի կողմից առեւտրային գործունեություն իրականացնողին վճարվելիք համաչափ գումարը հաշվարկվում է պայմանագրում համաձայնեցված ընդհանուր գնի հիման վրա: Եթե ընդհանուր գինը գերազանցում է, ապա համաչափ գումարը հաշվարկվում է տրամադրված ապրանքների շուկայական արժեքի հիման վրա:

4. Սպառողը չի կրի որեւէ ծախս՝

   ա) ծառայությունների մատուցման կամ ջրի, գազի կամ էլեկտրաէներգիայի մատակարարման համար, եթե դրանք վաճառքի չեն դրվել սահմանափակ ծավալով կամ սահմանված քանակով, կամ կենտրոնացված ջեռուցման մատակարարման համար՝ ամբողջությամբ կամ մասամբ, պայմանագիրը կատարելուց հրաժարվելու ժամկետում, եթե՝

      i) առեւտրային գործունեություն իրականացնողը չի տրամադրել 6-րդ հոդվածի 1-ին կետի «ը» կամ «ժ» ենթակետերին համապատասխան տեղեկությունները, կամ

ii) սպառողը բացահայտ չի պահանջել, որ ծառայությունների մատուցումը սկսվի պայմանագիրը կատարելուց հրաժարվելու ժամկետում՝ 7-րդ հոդվածի 3-րդ կետին եւ 8-րդ հոդվածի 8-րդ կետին համապատասխան, կամ

բ) նյութական կրիչով չմատակարարվող թվային բովանդակության մատակարարման համար՝ ամբողջությամբ կամ մասամբ, եթե՝

i) սպառողը նախապես բացահայտ իր նախնական համաձայնությունը չի տվել ծառայությունների մատուցումը մինչեւ 9-րդ հոդվածում նշված 14-օրյա ժամկետի ավարտը սկսելու մասին,

ii) սպառողը չի ընդունել, որ իր համաձայնությունը տալով՝ կորցնում է պայմանագիրը կատարելուց հրաժարվելու իր իրավունքը, կամ

iii) առեւտրային գործունեություն իրականացնողը 7-րդ հոդվածի 2-րդ կետին կամ 8-րդ հոդվածի 7-րդ կետին համապատասխան հաստատում չի տրամադրել:

5. Բացառությամբ 13-րդ հոդվածի 2-րդ կետով եւ սույն հոդվածով նախատեսված կարգի՝ սպառողը որեւէ պատասխանատվություն չի կրում պայմանագիրը կատարելուց հրաժարվելու իրավունքն իրացնելու հետեւանքով:

Հոդված 15

Պայմանագիրը կատարելուց հրաժարվելու իրավունքի իրացման հետեւանքներն օժանդակ պայմանագրերի վրա

1. Չհակասելով Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի «Սպառողների համար վարկային պայմանագրերի մասին» 2008 թվականի ապրիլի 23-ի

2008/48/ԵՀ հրահանգի 15-րդ հոդվածին [20], եթե սպառողը սույն հրահանգի 9-րդ եւ 14-րդ հոդվածներին համապատասխան իրացնում է հեռակա կամ շենքից դուրս կնքված պայմանագիրը կատարելուց հրաժարվելու իր իրավունքը, ապա ցանկացած օժանդակ պայմանագիր ինքնաբերաբար դադարեցվում է առանց սպառողի համար որեւէ ծախսի՝ բացառությամբ սույն հրահանգի 13-րդ հոդվածի 2-րդ կետով եւ 14-րդ հոդվածով նախատեսված կարգով:

2. Անդամ պետությունները սահմանում են մանրամասն կանոններ՝ այդ պայմանագրերի դադարեցման վերաբերյալ:

Հոդված 16

Բացառություններ պայմանագիրը կատարելուց հրաժարվելու իրավունքից

Անդամ պետությունները հեռակա եւ շենքից դուրս կնքված պայմանագրերի համար 9-15-րդ հոդվածներով սահմանված՝ պայմանագիրը կատարելուց հրաժարվելու իրավունքը չեն նախատեսում հետեւյալի մասով.

ա) ծառայությունների մատուցման պայմանագրեր՝ ծառայությունն ամբողջությամբ մատուցվելուց հետո, եթե մատուցումը սկսվել է սպառողի նախնական բացահայտ համաձայնությամբ, եւ այն փաստն ընդունելով, որ նա կկորցնի պայմանագիրը կատարելուց հրաժարվելու իր իրավունքն առեւտրային գործունեություն իրականացնողի կողմից պայմանագիրն ամբողջությամբ կատարվելուց անմիջապես հետո,

բ) այն ապրանքների մատակարարումը կամ ծառայությունների մատուցումը, որոնց գինը կախված է ֆինանսական շուկայում տատանումներից, որոնք չեն կարող վերահսկվել առեւտրային գործունեություն իրականացնողի

[20] ՊՏ L 133, 22.5.2008թ., էջ 66:

կողմից, եւ որոնք կարող են տեղի ունենալ պայմանագիրը կատարելուց հրաժարվելու ժամկետի ընթացքում,

գ) սպառողի մասնագրերին համապատասխան պատրաստված կամ բացահայտ անհատականացված ապրանքների մատակարարումը,

դ) արագ փչացող կամ պիտանիության կարճ ժամկետով ապրանքների մատակարարումը,

ե) կապարակնքված ապրանքների մատակարարումը, որոնք առողջության պահպանության կամ հիգիենայի նկատառումներով վերադարձի ենթակա չեն, եւ որոնց կապարակնիքն առաքումից հետո հանվել է,

զ) այն ապրանքների մատակարարումը, որոնք իրենց բնույթով առաքումից հետո անբաժանելիորեն խառնվում են այլ ապրանքատեսակների հետ,

է) ալկոհոլային խմիչքների մատակարարումը, որոնց գինը համաձայնեցվել է առուվաճառքի պայմանագիրը կնքելու պահին, որոնց առաքումը կարող է իրականացվել միայն 30 օր հետո, եւ որոնց փաստացի արժեքը կախված է շուկայի տատանումներից, որոնք առեւտրային գործունեություն իրականացնողի կողմից չեն կարող վերահսկվել,

ը) պայմանագրեր, որոնցում սպառողը հատուկ պահանջել է առեւտրային գործունեություն իրականացնողի այց՝ շտապ վերանորոգում կամ տեխնիկական սպասարկում իրականացնելու նպատակով: Եթե այդ այցելության դեպքում առեւտրային գործունեություն իրականացնողը, ի լրումն սպառողի կողմից հատուկ պահանջված ծառայությունների, մատուցում է ծառայություններ կամ տրամադրում է սպասարկում իրականացնելիս կամ վերանորոգում կատարելիս օգտագործման համար պարտադիր փոխարինող մասերից բացի այլ ապրանքներ, ապա պայմանագիրը կատարելուց հրաժարվելու իրավունքը կիրառվում է այդ լրացուցիչ ծառայությունների կամ ապրանքների նկատմամբ,

թ) կապարակնքված ձայնագրությունների կամ տեսագրությունների կամ կապարակնքված համակարգչային ծրագրաշարի մատակարարումը, որոնց կապարակնիքը հանվել է առաքումից հետո,

ժ) լրագրի, պարբերականի կամ ամսագրի մատակարարումը՝ բացառությամբ այդպիսի հրապարակումների մատակարարման բաժանորդային պայմանագրերի,

ժա) հրապարակային աճուրդին կնքված պայմանագրերը,

ժբ) ոչ բնակության նպատակով կացարանի տրամադրման, ապրանքների փոխադրման, ավտոմեքենաների վարձույթի ծառայությունները, սննդի կամ ժամանցի հետ կապված ծառայությունները, եթե պայմանագրով նախատեսված է կատարման կոնկրետ ամսաթիվ կամ ժամկետ,

ժգ) թվային բովանդակության մատակարարումը, որը չի մատակարարվում նյութական կրիչով, եթե կատարումը սկսվել է սպառողի բացահայտ նախնական համաձայնությամբ եւ այն փաստն ընդունելով, որ այդպիսով նա կորցնում է պայմանագիրը կատարելուց հրաժարվելու իր իրավունքը:

ԳԼՈՒԽ IV

ՍՊԱՌՈՂԻ ԱՅԼ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

Հոդված 17

Գործողության ոլորտը

1. 18-րդ եւ 20-րդ հոդվածները կիրառվում են առուվաճառքի պայմանագրերի նկատմամբ: Այդ հոդվածները չեն կիրառվում ջրի, գազի կամ

էլեկտրաէներգիայի մատակարարման պայմանագրերի նկատմամբ, եթե դրանք վաճառքի չեն դրվել սահմանափակ ծավալով կամ սահմանված քանակով, կենտրոնացված ջեռուցման կամ այն թվային բովանդակության պայմանագրերի նկատմամբ, որոնք չեն մատակարարվել մշտական կրիչով:

2. 19-րդ, 21-րդ եւ 22-րդ հոդվածները կիրառվում են առուվաճառքի եւ ծառայությունների մատուցման պայմանագրերի նկատմամբ եւ ջրի, գազի, էլեկտրաէներգիայի, կենտրոնացված ջեռուցման կամ թվային բովանդակության մատակարարման պայմանագրերի նկատմամբ:

Հոդված 18

Առաքումը

1. Եթե կողմերն առաքման ժամկետի վերաբերյալ այլ համաձայնություն ձեռք չեն բերել, վաճառողն ապրանքներն առաքում է սպառողին՝ ապրանքների ֆիզիկական տնօրինումը կամ դրանց նկատմամբ հսկողությունը փոխանցելու միջոցով՝ առանց անհարկի ուշացման, սակայն պայմանագիրը կնքելու օրվանից հետո 30 օրվա ընթացքում:

2. Եթե առեւտրային գործունեություն իրականացնողը սպառողի հետ համաձայնեցված ժամկետում կամ 1-ին պարբերության մեջ սահմանված ժամկետում չի կատարում ապրանքներն առաքելու իր պարտավորությունը, ապա սպառողը պետք է առեւտրային գործունեություն իրականացնողից պահանջի առաքումը կատարել լրացուցիչ ժամկետի ընթացքում՝ ստեղծված հանգամանքներին համապատասխան: Եթե առեւտրային գործունեություն իրականացնողն ապրանքներն այդ լրացուցիչ ժամկետի ընթացքում չի առաքում, ապա սպառողն իրավունք ունի դադարեցնելու պայմանագիրը:

Առաջին պարբերությունը չի կիրառվում առուվաճառքի պայմանագրերի վրա, եթե առեւտրային գործունեություն իրականացնողը հրաժարվել է առաքել ապրանքները, կամ եթե համաձայնեցված առաքման ժամկետում առաքում կատարելը կարեւոր է՝ հաշվի առնելով պայմանագրի կնքմանն ուղեկցող բոլոր հանգամանքները, կամ եթե սպառողը նախքան պայմանագիրը կնքելն առեւտրային գործունեություն իրականացնողին տեղեկացնում է, որ առաքման կատարումը մինչեւ կամ ներառյալ սահմանված օրը կարեւոր է: Այդ դեպքերում, եթե առեւտրային գործունեություն իրականացնողն ապրանքները չի առաքում սպառողի հետ համաձայնեցված ժամկետում կամ 1-ին պարբերության մեջ սահմանված ժամկետում, ապա սպառողն իրավունք ունի անհապաղ դադարեցնելու պայմանագիրը:

3. Պայմանագրի դադարեցումից հետո առեւտրային գործունեություն իրականացնողը, առանց անհարկի ուշացման, փոխհատուցում է պայմանագրով վճարվող բոլոր գումարները:

4. Ի լրումն 2-րդ պարբերության համապատասխան պայմանագիրը դադարեցնելուն՝ սպառողը կարող է օգտվել ազգային օրենսդրությամբ նախատեսված՝ իրավական պաշտպանության այլ միջոցներից:

Հոդված 19

Վճարային միջոցներն օգտագործելու վճարները

Անդամ պետություններն առեւտրային գործունեություն իրականացնողներին արգելում են սպառողներից, տվյալ վճարային միջոցն օգտագործելու հետ կապված, գանձել վճարներ, որոնք գերազանցում են այդ միջոցների օգտագործման համար վաճառողի կրած ծախսերը:

Հոդված 20

Ռիսկի փոխանցումը

Այն պայմանագրերում, որոնց դեպքում առեւտրային գործունեություն իրականացնողն ապրանքներն առաքում է սպառողին, ապրանքների կորստի կամ վնասման ռիսկը փոխանցվում է սպառողին, երբ նա կամ սպառողի կողմից նշված եւ փոխադրողից բացի այլ երրորդ կողմը ստանձնում է ապրանքների ֆիզիկական տնօրինումը: Այնուամենայնիվ, ռիսկը սպառողին է փոխանցվում ապրանքը փոխադրողին առաքելուց հետո, եթե սպառողը փոխադրողին պատվիրել է ապրանքները տեղափոխել, եւ այդ ընտրությունը չի առաջարկվել առեւտրային գործունեություն իրականացնողի կողմից՝ չխախտելով փոխադրողի նկատմամբ սպառողի ունեցած իրավունքները:

Հոդված 21

Հեռախոսով հաղորդակցությունը

Անդամ պետություններն ապահովում են, որ եթե առեւտրային գործունեություն իրականացնողը շահագործում է հեռախոսագիծ, որպեսզի կնքված պայմանագրի առնչությամբ նրա հետ հեռախոսով կապ հաստատվի, ապա սպառողը առեւտրային գործունեություն իրականացնողի հետ կապ հաստատելիս պարտավոր չէ վճարել հիմնական դրույքաչափից ավելի:

Առաջին ենթապարբերությունը չի խախտում հեռահաղորդակցության ծառայությունների մատակարարների՝ այդ հեռախոսազանգերի համար գումար գանձելու իրավունքը:

Հոդված 22

Լրացուցիչ վճարները

Նախքան սպառողի՝ պայմանագրով կամ առաջարկով պարտավորություն ստանձնելը՝ առեւտրային գործունեություն իրականացնողը պետք է փորձի ստանալ սպառողի բացահայտ համաձայնությունը՝ առեւտրային գործունեություն իրականացնողի հիմնական պայմանագրային պարտավորության համար համաձայնեցված վարձատրությունից բացի որեւէ այլ լրացուցիչ վճար կատարելու վերաբերյալ: Եթե առեւտրային գործունեություն իրականացնողը չի ստացել սպառողի բացահայտ համաձայնությունը, սակայն ենթադրել է դա՝ օգտագործելով սկզբնադիր տարբերակներ, որոնք սպառողից պահանջվում է մերժել՝ լրացուցիչ վճարումից խուսափելու համար, ապա սպառողը կունենա այդ վճարի փոխհատուցման իրավունք:

ԳԼՈՒԽ V

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 23

Կիրարկումը

1. Անդամ պետություններն ապահովում են պատշաճ եւ արդյունավետ միջոցների առկայությունը՝ սույն հրահանգին համապատասխանությունն ապահովելու նպատակով:

2. Առաջին պարբերությունում նշված միջոցները ներառում են դրույթներ, որոնցով հետեւյալ մարմիններից մեկը կամ մի քանիսը, ինչպես սահմանված է ազգային օրենսդրությամբ, կարող է ազգային օրենսդրությանը համապատասխան հայց ներկայացնել դատարաններ կամ իրավասու վարչական մարմին՝ ապահովելու ազգային օրենսդրության՝ սույն հրահանգը փոխատեղող ազգային դրույթների կիրառումը՝

ա) պետական մարմիններ կամ դրանց ներկայացուցիչներ,

բ) սպառողական կազմակերպություններ, որոնք սպառողների պաշտպանության հարցում ունեն օրինական շահ,

գ) մասնագիտական կազմակերպություններ, որոնք գործունեություն ծավալելու հարցում ունեն օրինական շահ:

Հոդված 24

Պատժամիջոցները

1. Անդամ պետությունները սահմանում են սույն հրահանգի համաձայն ընդունված ազգային դրույթների խախտման դեպքում կիրառվող պատժամիջոցների վերաբերյալ կանոններ եւ ձեռնարկում են բոլոր միջոցները, որոնք անհրաժեշտ են դրանց իրականացումն ապահովելու համար: Նախատեսված պատժամիջոցները պետք է լինեն արդյունավետ, համաչափ եւ տարհամոզիչ:

2. Անդամ պետություններն այդ դրույթների մասին մինչեւ 2013 թվականի դեկտեմբերի 13-ը ծանուցում են Հանձնաժողովին, ինչպես նաեւ անհապաղ Հանձնաժողովին են ծանուցում հետագայում դրանց վրա ազդող ցանկացած փոփոխության մասին:

Հոդված 25

Հրահանգի հրամայական բնույթը

Եթե պայմանագրի նկատմամբ կիրառվող օրենսդրությունն անդամ պետության օրենսդրությունն է, ապա սպառողները չեն կարող հրաժարվել սույն հրահանգը փոխատեղող ազգային միջոցներով իրենց վերապահված իրավունքներից:

Ցանկացած պայմանագրային պայման, որն ուղղակիորեն կամ անուղղակիորեն հրաժարում է սույն հրահանգից բխող իրավունքներից կամ սահմանափակում է դրանք, սպառողի համար պարտադիր ուժ չունի:

Հոդված 26

Տեղեկությունները

Անդամ պետությունները ձեռնարկում են համապատասխան միջոցներ՝ սպառողներին եւ առեւտրային գործունեություն իրականացնողներին սույն հրահանգը փոխատեղող ազգային դրույթների մասին տեղեկացնելու համար, եւ ըստ պատշաճության խրախուսում են 2005/29/ԵՀ հրահանգի 2-րդ հավելվածի «է» կետով սահմանված՝ առեւտրային գործունեություն իրականացնողներին եւ վարքագծի կանոնների հեղինակներին սպառողներին տեղեկացնելու վարքագծի իրենց կանոնների մասին:

Հոդված 27

Անհաղորդ առեւտուրը

Սպառողն ապրանքների, ջրի, գազի, էլեկտրաէներգիայի, կենտրոնացված ջեռուցման կամ թվային բովանդակության չպատվիրված մատակարարման կամ ծառայությունների չպատվիրված մատուցման դեպքերում ազատվում է 2005/29/ԵՀ հրահանգի 5-րդ հոդվածի 5-րդ կետով եւ 1-ին հավելվածի 29-րդ կետով արգելված որեւէ փոխհատուցում կատարելու պարտավորությունից: Այդպիսի դեպքերում սպառողի կողմից այդպիսի չպատվիրված մատակարարումից կամ ծառայությունների մատուցումից հետո արձագանքի բացակայությունը համաձայնություն չէ:

Հոդված 28

Փոխատեղումը

1. Անդամ պետությունները մինչեւ 2013 թվականի դեկտեմբերի 13-ն ընդունում եւ հրապարակում են սույն հրահանգին համապատասխանության համար անհրաժեշտ օրենքները, կանոնակարգերը եւ վարչական դրույթները: Նրանք անմիջապես Հանձնաժողովին են ներկայացնում այդ միջոցների տեքստը՝ փաստաթղթերի տեսքով: Հանձնաժողովն այդ փաստաթղթերն օգտագործում է 30-րդ հոդվածում նշված զեկույցը կազմելու նպատակով:

   Նրանք այդ միջոցները կիրառում են 2014 թվականի հունիսի 13-ից:

   Երբ անդամ պետություններն ընդունեն այդ միջոցները, դրանք պետք է հղում պարունակեն սույն հրահանգին կամ ուղեկցվեն այդպիսի հղումով՝ դրանց պաշտոնական հրապարակման դեպքում: Անդամ պետությունները որոշում են, թե ինչպես պետք է կատարվի այդ հղումը:

2. Սույն հրահանգի դրույթները կիրառվում են 2014 թվականի հունիսի 13-ից հետո կնքված պայմանագրերի նկատմամբ:

Հոդված 29

Հաշվետվություններ ներկայացնելու վերաբերյալ պահանջները

1. Եթե անդամ պետությունն օգտագործում է 3-րդ հոդվածի 4-րդ կետում, 6 հոդված-ի 7-րդ կետում, 6-րդ հոդվածի 8-րդ կետում, 7-րդ հոդվածի 4-րդ կետում, 8-րդ հոդվածի 6-րդ կետում եւ 9-րդ հոդվածի 3-րդ կետում նշված կարգավորող բնույթի ընտրություններից որեւէ մեկը, ապա այն մինչեւ 2013 թվականի դեկտեմբերի 13-ն այդ մասին, ինչպես նաեւ հետագա ցանկացած փոփոխության մասին տեղեկացնում է Հանձնաժողովին:

2. Հանձնաժողովն ապահովում է, որ 1-ին պարբերությունում նշված տեղեկությունները հեշտ հասանելի լինեն սպառողներին եւ առեւտրային գործունեություն իրականացնողներին, ի թիվս այլնի, հատուկ դրա համար նախատեսված կայքի միջոցով:

3. Հանձնաժողովն 1-ին պարբերությունում նշված տեղեկություններն ուղարկում է անդամ պետություններին եւ Եվրոպական պառլամենտին: Հանձնաժողովն այդ տեղեկությունների վերաբերյալ խորհրդատվություն է անցկացնում շահագրգիռ կողմերի հետ:

Հոդված 30

Հանձնաժողովի կողմից հաշվետվության ներկայացումը եւ վերանայումը

Հանձնաժողովը մինչեւ 2016 թվականի դեկտեմբերի 13-ը Եվրոպական պառլամենտ եւ Խորհուրդ է ներկայացնում սույն հրահանգի կիրառման մասին հաշվետվություն: Այդ հաշվետվությունը մասնավորապես ներառում է սույն հրահանգի՝ թվային բովանդակությանը վերաբերող դրույթների գնահատում, ներառյալ՝ պայմանագիրը կատարելուց հրաժարվելու իրավունքը: Անհրաժեշտության դեպքում հաշվետվությունն ուղեկցվում է օրենսդրական առաջարկություններով՝ սույն հրահանգը սպառողների իրավունքների ոլորտում առկա զարգացումներին հարմարեցնելու համար:

ԳԼՈՒԽ VI

ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 31

Ուժը կորցրած ճանաչելը

Եվրոպական պառլամենտի եւ խորհրդի «Սպառողական ֆինանսական ծառայությունների հեռակա շուկայահանման մասին» [21] 2002 թվականի սեպտեմբերի 23-ի 2002/65/ԵՀ հրահանգով եւ 2005/29/ԵՀ եւ 2007/64/ԵՀ հրահանգներով փոփոխված՝ 85/577/ԵՏՀ եւ 97/7/ԵՀ հրահանգները 2014 թվականի հունիսի 13-ից ուժը կորցրած են ճանաչվում:

[21] ՊՏ L 271, 9.10.2002թ., էջ 16:

Ուժը կորցրած հրահանգներին հղումները մեկնաբանվում են որպես սույն հղումներ հրահանգին եւ ընթերցվում են 2-րդ հավելվածում սահմանված համեմատական աղյուսակի համաձայն:

Հոդված 32

93/13/ԵՏՀ հրահանգում կատարվող փոփոխությունները

93/13/ԵՏՀ հրահանգը լրացվում է հետեւյալ հոդվածով.

«Հոդված 8ա

1. Եթե անդամ պետությունը 8-րդ հոդվածին համապատասխան դրույթ է ընդունում, ապա այն այդ մասին, ինչպես նաեւ ցանկացած հետագա փոփոխության մասին տեղեկացնում է Հանձնաժողովին, մասնավորապես, եթե այդ դրույթները՝

   - անարդարության գնահատումն ընդլայնում են՝ տարածվելով անհատական բանակցված պայմանագրային պայմանների կամ գնի կամ հատուցման համապատասխանության վրա, կամ

   - պարունակում են պայմանագրային պայմաններ, որոնք համարվում են անարդար:

2. Հանձնաժողովն ապահովում է, որ 1-ին պարբերությունում նշված տեղեկությունները հեշտ հասանելի լինեն սպառողներին եւ առեւտրային գործունեություն իրականացնողներին, ի թիվս այլնի, հատուկ դրա համար նախատեսված կայքի միջոցով:

3. Հանձնաժողովն 1-ին պարբերությունում նշված տեղեկություններն ուղարկում է անդամ պետություններին եւ Եվրոպական պառլամենտին: Հանձնաժողովն այդ տեղեկությունների վերաբերյալ խորհրդատվություն է անցկացնում շահագրգիռ կողմերի հետ:»:

Հոդված 33

1999/44/ԵՀ հրահանգի փոփոխությունները

1999/44/ԵՀ հրահանգը լրացվել է հետեւյալ հոդվածով.

«Հոդված 8ա

Հաշվետվություններ ներկայացնելու վերաբերյալ պահանջները

1. Եթե 8-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն անդամ պետությունն ընդունում է սպառողների պաշտպանության առավել խիստ դրույթներ, քան սահմանված են 5-րդ հոդվածի 1-3-րդ կետերում եւ 7-րդ հոդվածի 1-ին կետում, ապա այն Հանձնաժողովին տեղեկացնում է դրա, ինչպես նաեւ հետագա փոփոխությունների մասին:

2. Հանձնաժողովն ապահովում է, որ 1-ին պարբերությունում նշված տեղեկությունները հեշտ հասանելի լինեն սպառողներին եւ առեւտրային գործունեություն իրականացնողներին, ի թիվս այլնի, հատուկ դրա համար նախատեսված կայքի միջոցով:

3. Հանձնաժողովն 1-ին պարբերությունում նշված տեղեկություններն ուղարկում է մյուս անդամ պետություններին եւ Եվրոպական պառլամենտին: Հանձնաժողովն այդ տեղեկությունների վերաբերյալ խորհրդատվություն է անցկացնում շահագրգիռ կողմերի հետ:»:

Հոդված 34

Ուժի մեջ մտնելը

Սույն հրահանգն ուժի մեջ է մտնում *Եվրոպական միության պաշտոնական տեղեկագրում* հրապարակվելուց հետո 20-րդ օրը:

Հոդված 35

Հասցեատերերը

Սույն հրահանգը հասցեագրված է անդամ պետություններին:

Կատարված է Ստրասբուրգում 2011 թվականի հոկտեմբերի 25-ին:

Եվրոպական պառլամենտի կողմից՝	*Խորհրդի կողմից՝*
Նախագահ	*Նախագահ*
Ե. Բուզեկ	Մ. Դովգիելեւիչ

ՀԱՎԵԼՎԱԾ I

Տեղեկությունների պայմանագիրը կատարելուց հրաժարվելու իրավունքի իրականացման վերաբերյալ

Ա. Պայմանագիրը կատարելուց հրաժարվելու տիպային հրահանգներ

Պայմանագիրը կատարելուց հրաժարվելու իրավունքը

Դուք ունեք առանց որեւէ հիմնավորման 14-օրյա ժամկետում սույն պայմանագիրը կատարելուց հրաժարվելու իրավունք:

Պայմանագիրը կատարելուց հրաժարվելու ժամկետը կլրանա (1) օրվանից 14 օր հետո:

Պայմանագիրը կատարելուց հրաժարվելու իրավունքն իրացնելու համար Դուք պետք է մեզ (2) սույն պայմանագիրը կատարելուց հրաժարվելու մասին Ձեր որոշման վերաբերյալ տեղեկացնեք միանշանակ հայտարարության միջոցով (օրինակ՝ փոստով, ֆաքսով կամ էլեկտրոնային փոստով ուղարկված նամակով): Դուք կարող եք օգտագործել կից ներկայացված՝ պայմանագիրը կատարելուց հրաժարվելու օրինակելի ձեւը, սակայն դա պարտադիր չէ: 3

Պայմանագիրը կատարելուց հրաժարվելու վերջնաժամկետը պահպանելու համար բավարար կլինի, որ Դուք պայմանագիրը կատարելուց հրաժարվելու Ձեր իրավունքն իրացնելու մասին Ձեր գրությունն ուղարկեք նախքան պայմանագիրը կատարելուց հրաժարվելու ժամկետի ավարտը:

Պայմանագիրը կատարելուց հրաժարվելու հետեւանքները

Եթե հրաժարվեք սույն պայմանագիրը կատարելուց, մենք Ձեզ կփոխհատուցենք Ձեզանից ստացված բոլոր վճարները, այդ թվում՝ առաքման ծախսերը (բացառությամբ այն լրացուցիչ ծախսերի, որոնք կրել եք՝ ընտրելով առաքման այլ տեսակ, քան մեր կողմից առաջարկված՝ ստանդարտ առաքման ամենաէժան տեսակը), առանց անհարկի ուշացման եւ ցանկացած դեպքում ոչ ուշ, քան

պայմանագիրը կատարելուց հրաժարվելու Ձեր որոշման մասին մեր տեղեկանալու օրվանից 14 օր հետո: Մենք այդ փոխհատուցումը կիրականացնենք՝ օգտագործելով նույն վճարային միջոցները, որոնք Դուք եք օգտագործել սկզբնական գործարքի համար, եթե Դուք բացահայտ այլ բան չեք համաձայնեցրել. ամեն դեպքում, Դուք այդ փոխհատուցման արդյունքում որեւէ վճար չեք կատարի: 4

5

6

Լրացման վերաբերյալ ցուցումներ.

1. Չակերտների մեջ տեղադրեք հետեւյալ տեքստերից մեկը.

   ա) ծառայության մատուցման պայմանագրի կամ ջրի, գազի կամ էլեկտրաէներգիայի մատակարարման պայմանագրի դեպքում, եթե դրանք վաճառքի չեն դրվել սահմանափակ ծավալով կամ սահմանված քանակով, կենտրոնացված ջեռուցման կամ այն թվային բովանդակության պայմանագրի դեպքում, որը չի մատակարարվել մշտական կրիչով՝ «պայմանագիրը կնքելու»

   բ) առուվաճառքի պայմանագրի դեպքում՝ «ապրանքների ֆիզիկական տնօրինումը Ձեր կամ փոխադրողից բացի այլ եւ Ձեր կողմից նշված երրորդ կողմի կողմից ստանձնվելու»,

   գ) սպառողի կողմից մեկ պատվերի շրջանակներում մի քանի ապրանք պատվիրելու եւ դրանք առանձին առաքելու վերաբերյալ պայմանագրի դեպքում՝ «վերջին ապրանքի ֆիզիկական տնօրինումը Ձեր կամ փոխադրողից բացի այլ եւ Ձեր կողմից նշված երրորդ կողմի կողմից ստանձնվելու»,

   դ) մի քանի խմբաքանակից կամ կտորից բաղկացած ապրանքի առաքման վերաբերյալ պայմանագրի դեպքում՝ «վերջին խմբաքանակի

կամ կտորի ֆիզիկական տնօրինումը Ձեր կամ փոխադրողից բացի այլ եւ Ձեր կողմից նշված երրորդ կողմի կողմից ստանձնվելու»,

ե) սահմանված ժամկետի ընթացքում ապրանքների կանոնավոր առաքման վերաբերյալ պայմանագրի դեպքում՝ «առաջին ապրանքի ֆիզիկական տնօրինումը Ձեր կամ փոխադրողից բացի այլ եւ Ձեր կողմից նշված երրորդ կողմի կողմից ստանձնվելու»:

2. Լրացրեք Ձեր անունը, աշխարհագրական հասցեն եւ առկայության դեպքում՝ Ձեր հեռախոսահամարը, ֆաքսի համարը եւ էլեկտրոնային փոստի հասցեն:

3. Եթե Դուք սպառողին հնարավորություն եք տալիս էլեկտրոնային եղանակով լրացնել եւ ներկայացնել պայմանագիրը կատարելուց հրաժարվելու մասին տեղեկությունները Ձեր կայքում, ապա լրացրեք հետեւյալը. «Դուք նաեւ կարող եք էլեկտրոնային եղանակով լրացնել եւ ներկայացնել պայմանագիրը կատարելուց հրաժարվելու օրինակելի ձեւը կամ ցանկացած այլ միանշանակ հայտարարություն մեր կայքում [լրացրեք համացանցային հասցեն]: Եթե օգտագործեք այս տարբերակը, մենք անհապաղ մշտական կրիչով (օրինակ՝ էլեկտրոնային փոստով) Ձեզ կուղարկենք պայմանագիրը կատարելուց հրաժարվելու մասին Ձեր գրությունը ստանալու հաստատումը»:

4. Առուվաճառքի այն պայմանագրերի դեպքում, որոնցում Դուք չեք առաջարկել ապրանքները վերցնել պայմանագիրը կատարելուց հրաժարվելու դեպքում, լրացրեք հետեւյալը. «Մենք կարող ենք հետաձգել փոխհատուցման կատարումը մինչեւ ապրանքները հետ ստանալը կամ մինչեւ ապրանքները հետ ուղարկելու մասին Ձեր կողմից ապացույց ներկայացվելը՝ կախված նրանից, թե որն ավելի շուտ տեղի կունենա»:

5. Եթե սպառողը պայմանագրի հետ կապված ստացել է ապրանքներ՝

ա) լրացրեք՝

- «Մենք կվերցնենք ապրանքները», կամ,

- «Դուք պետք է հետ ուղարկեք ապրանքները կամ դրանք հանձնեք մեզ կամ ... [լրացրեք անհրաժեշտության դեպքում ապրանքներն ընդունելու համար Ձեր կողմից լիազորված անձի անունը եւ աշխարհագրական հասցեն], առանց անհարկի ուշացման եւ ամեն դեպքում ոչ ուշ, քան այն օրվանից 14 օր հետո, երբ Դուք մեզ կտեղեկացնեք պայմանագիրը Ձեր կողմից կատարելուց հրաժարվելու մասին: Վերջնաժամկետը համարվում է պահպանված, եթե Դուք ապրանքները հետ ուղարկեք մինչեւ 14-օրյա ժամկետի ավարտը»,

բ) լրացրեք՝

- «Ապրանքները վերադարձնելու ծախսերը կկրենք մենք»,
- «Դուք ստիպված կլինեք կրելու ապրանքները վերադարձնելու ուղղակի ծախսերը»,
- Եթե հեռակա պայմանագրի դեպքում Դուք չեք առաջարկում կրել ապրանքները վերադարձնելու ծախսերը, եւ ապրանքներն իրենց բնույթից ելնելով, որպես կանոն, չեն կարող վերադարձվել փոստով, ապա՝ «Դուք ստիպված կլինեք կրել ապրանքները վերադարձնելու ուղղակի ծախսերը՝ ... [լրացրեք գումարը] եվրո», կամ եթե ապրանքները վերադարձնելու ծախսերը ողջամտորեն չեն կարող հաշվարկվել նախօրոք, ապա՝ «Դուք ստիպված կլինեք կրելու ապրանքները վերադարձնելու ուղղակի ծախսերը: Գնահատված առավելագույն ծախսերը կազմում են մոտավորապես... [լրացրեք գումարը] եվրո», կամ
- Եթե շենքից դուրս կնքված պայմանագրի դեպքում ապրանքներն իրենց բնույթից ելնելով, որպես կանոն, չեն կարող վերադարձվել փոստով եւ առաքվել են սպառողի տուն պայմանագիրը կնքելու ժամանակ, ապա՝ «Մենք ապրանքները կվերցնենք մեր հաշվին», եւ

գ) լրացրեք «Դուք պատասխանատվություն եք կրում միայն ապրանքները դրանց բնույթը, բնութագրերը եւ ֆունկցիոնալ հնարավորությունները որոշելու համար անհրաժեշտ եղանակից բացի այլ կերպ տնօրինելու արդյունքում դրանց արժեքի նվազման չափով»:

6. Ծառայությունների մատուցման կամ ջրի, գազի կամ էլեկտրաէներգիայի մատակարարման պայմանագրերի դեպքում, եթե դրանք վաճառքի չեն դրվել սահմանափակ ծավալով կամ սահմանված քանակով, կամ կենտրոնացված ջեռուցման վերաբերյալ պայմանագրերի դեպքում լրացրեք հետեւյալը. «Եթե Դուք պահանջել եք, որ ծառայությունների մատուցումը կամ ջրի/գազի/էլեկտրաէներգիայի/կենտրոնացված ջեռուցման [հանել կիրառելի չլինելու դեպքում] սկսվի պայմանագիրը կատարելուց հրաժարվելու ժամկետում, ապա պետք է վճարեք գումար, որը համաչափ է մինչեւ պայմանագիրը Ձեր կողմից կատարելուց հրաժարվելու մասին մեզ տեղեկացնելն իրականացված մատուցմանը (մատակարարմանը)՝ պայմանագրի ամբողջական ծածկույթի համեմատ»:

Բ. Պայմանագիրը կատարելուց հրաժարվելու օրինակելի ձեւը

(սույն ձեւը լրացրեք եւ վերադարձրեք միայն, եթե ցանկանում եք պայմանագիրը կատարելուց հրաժարվել)

- Ում՝ [այստեղ առեւտրային գործունեություն իրականացնողը պետք է լրացնի առեւտրային գործունեություն իրականացնողի անունը, աշխարհագրական հասցեն եւ առկայության դեպքում՝ նրա ֆաքսի համարը եւ էլեկտրոնային փոստի հասցեն].
- Ես/Մենք (*) սույնով տեղեկացնում ենք, որ խզում եմ/ենք (*) իմ/մեր (*) հետեւյալ ապրանքների առուվաճառքի պայմանագիրը (*)/հետեւյալ ծառայությունների մատուցման պայմանագիրը (*),
- Պատվիրման ամսաթիվ (*) (ստացման ամսաթիվ) (*),

- Սպառողի (սպառողների) անունը (անունները),
- Սպառողի (սպառողների) հասցեն (հասցեները),
- Սպառողի (սպառողների) ստորագրությունը (միայն, եթե սույն ձեւի մասին ծանուցվում է թղթային եղանակով),
- Ամսաթիվը

ՀԱՎԵԼՎԱԾ II

Համեմատական աղյուսակ

85/577/ԵՏՀ հրահանգ	97/7/ԵՀ հրահանգ	Սույն հրահանգը
1-ին հոդված		3-րդ հոդվածը մեկնաբանվում է 2-րդ հոդվածի 8-րդ եւ 9-րդ կետերի եւ 16-րդ հոդվածի «ը» կետի հետ միասին
	1-ին հոդված	1-ին հոդվածը մեկնաբանվում է 2-րդ հոդվածի 7-րդ կետի հետ միասին
2-րդ հոդված		2–րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ կետեր
	2-րդ հոդվածի 1-ին կետ	2-րդ հոդվածի 7-րդ կետ
	2-րդ հոդվածի 2-րդ կետ	2-րդ հոդվածի 1-ին կետ
	2-րդ հոդվածի 3-րդ կետ	2-րդ հոդվածի 2-րդ կետ
	2-րդ հոդվածի 4-րդ կետի առաջին նախադասություն	2-րդ հոդվածի 7-րդ կետ
	2-րդ հոդվածի 4-րդ կետի երկրորդ նախադասություն	-
	2-րդ հոդվածի 5-րդ կետ	-
3-րդ հոդվածի 1-ին կետ		3-րդ հոդվածի 4-րդ կետ
3-րդ հոդվածի 2-րդ կետի «ա» ենթակետ		3-րդ հոդվածի 3-րդ կետի «ե» եւ «զ» ենթակետեր
3-րդ հոդվածի 2-րդ կետի «բ» ենթակետ		3-րդ հոդվածի 3-րդ կետի «ժ» ենթակետ
3-րդ հոդվածի 2-րդ կետ «գ» ենթակետ		-
3-րդ հոդվածի 2-րդ կետի «դ» ենթակետ		3-րդ հոդվածի 3-րդ կետի «դ» ենթակետ
3-րդ հոդվածի 2-րդ կետի «ե» ենթակետ		3-րդ հոդվածի 3-րդ կետի «դ» ենթակետ
3-րդ հոդվածի 3-րդ կետ		-
	3-րդ հոդվածի 1-ին կետի առաջին պարբերույթ	3-րդ հոդվածի 3-րդ կետի «դ» ենթակետ
	3-րդ հոդվածի 1-ին կետի երկրորդ պարբերույթ	3-րդ հոդվածի 3-րդ կետի «ժբ» ենթակետ
	3-րդ հոդվածի 1-ին կետի երրորդ պարբերույթ	3-րդ հոդվածի 3-րդ կետի «ժգ» կետ
	3-րդ հոդվածի 1-ին կետի չորրորդ պարբերույթ	3-րդ հոդվածի 3-րդ կետի «ե» եւ «զ» ենթակետեր
	3-րդ հոդվածի 1-ին կետի	6-րդ հոդվածի 3-րդ կետը եւ 16-րդ հոդվածի «ժա» կետը մեկնաբանվում են

85/577/ԵՏՀ հրահանգ	97/7/ԵՀ հրահանգ	Սույն հրահանգը
	հինգերորդ պարբերույթ	2-րդ հոդվածի 13-րդ ենթակետի հետ միասին
	3-րդ հոդվածի 2-րդ կետի առաջին պարբերույթ	3-րդ հոդվածի 3-րդ կետի «ժ» ենթակետ
	3-րդ հոդվածի 2-րդ կետի երկրորդ պարբերույթ	3-րդ հոդվածի 3-րդ կետի «զ» ենթակետ (բնակության նպատակով բնակելի տարածքի վարձակալության համար), «է» ենթակետ (զբոսաշրջային փաթեթի համար), «ը» ենթակետ (տարաժամկետ (ժամկետային հաջորդականությամբ) օգտագործման համար), «ժա» ենթակետ (ուղեւորատար տրանսպորտի համար՝ որոշ բացառություններով) եւ 16-րդ հոդվածի 1-ին կետ (պայմանագիրը կատարելուց հրաժարվելու իրավունքից բացառությունները)
4-րդ հոդվածի առաջին նախադասություն		6-րդ հոդվածի 1-ին կետի «բ», «գ» եւ «ը» ենթակետեր եւ 7-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ կետեր
4-րդ հոդվածի 2-րդ նախադասություն		6-րդ հոդվածի 1-ին կետի «ա» ենթակետ եւ 7-րդ հոդվածի 1-ին կետ
4-րդ հոդվածի երրորդ նախադասություն		6-րդ հոդվածի 1-ին կետ
4-րդ հոդվածի չորրորդ նախադասություն		10-րդ հոդված
	4-րդ հոդվածի 1-ին կետի «ա» ենթակետ	6-րդ հոդվածի 1-ին կետի «բ» եւ «գ» ենթակետեր
	4-րդ հոդվածի 1-ին կետի «բ» ենթակետ	6-րդ հոդվածի 1-ին կետի «ա» ենթակետ
	4-րդ հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետ	6-րդ հոդվածի 1-ին կետի «ե» ենթակետ
	4-րդ հոդվածի 1-ին կետի «դ» ենթակետ	6-րդ հոդվածի 1-ին կետի «ե» ենթակետ
	4-րդ հոդվածի 1-ին կետի «ե» ենթակետ	6-րդ հոդվածի 1-ին կետի «է» ենթակետ
	4-րդ հոդվածի 1-ին կետի «զ» ենթակետ	6-րդ հոդվածի 1-ին կետի «ը» ենթակետ
	4-րդ հոդվածի 1-ին կետի «է» ենթակետ	6-րդ հոդվածի 1-ին կետի «զ» ենթակետ
	4-րդ հոդվածի 1-ին կետի «ը» ենթակետ	-
	4-րդ հոդվածի 1-ին կետի «թ»	6-րդ հոդվածի 1-ին կետի «ժե» եւ «ժզ»

85/577/ԵՏՀ հրահանգ	97/7/ԵՀ հրահանգ	Սույն հրահանգը
	ենթակետ	ենթակետեր
	4-րդ հոդվածի 2-րդ կետ	6-րդ հոդվածը մեկնաբանվում է հետեւյալ հոդվածների հետ համատեղ՝ 8-րդ հոդվածի 1-ին, 2-րդ եւ 4-րդ կետեր
	4-րդ հոդվածի 3-րդ կետ	8-րդ հոդվածի 5-րդ կետ
	5-րդ հոդվածի 1-ին կետ	8-րդ հոդվածի 7-րդ կետ
	5-րդ հոդվածի 2-րդ կետ	3-րդ հոդվածի 3-րդ կետի «ժգ» ենթակետ
	6-րդ հոդվածի 1-ին կետ	9-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ կետեր, 10-րդ հոդված, 13-րդ հոդվածի 2-րդ կետ, 14-րդ հոդված
	6-րդ հոդվածի 2-րդ կետ	13-րդ հոդված եւ 14-րդ հոդվածի 1-ին կետի երկրորդ եւ երրորդ ենթապարբերություններ
	6-րդ հոդվածի 3-րդ կետի առաջին պարբերույթ	16-րդ հոդվածի «ա» կետ
	6-րդ հոդվածի 3-րդ կետի երկրորդ պարբերույթ	16-րդ հոդվածի «բ» կետ
	6-րդ հոդվածի 3-րդ կետի երրորդ պարբերույթ	16-րդ հոդվածի «գ» եւ «դ» կետեր
	6-րդ հոդվածի 3-րդ կետի չորրորդ պարբերույթ	16-րդ հոդվածի «թ» կետ
	6-րդ հոդվածի 3-րդ կետի հինգերորդ պարբերույթ	16-րդ հոդվածի «ժ» կետ
	6-րդ հոդվածի 3-րդ կետի վեցերորդ պարբերույթ	3-րդ հոդվածի 3-րդ կետի «գ» ենթակետ
	6-րդ հոդվածի 4-րդ կետ	15-րդ հոդված
	7-րդ հոդվածի 1-ին կետ	18-րդ հոդվածի 1-ին կետ (առուվաճառքի պայմանագրերի համար)
	7-րդ հոդվածի 2-րդ կետ	18-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ եւ 4-րդ կետեր
	7-րդ հոդվածի 3-րդ կետ	-
	8-րդ հոդված	-
	9-րդ հոդված	27-րդ հոդված
	10-րդ հոդված	- (սակայն տե՛ս 2002/58/ԵՀ հրահանգի 13-րդ հոդվածը)
	11-րդ հոդվածի 1-ին կետ	23-րդ հոդվածի 1-ին կետ
	11-րդ հոդվածի 2-րդ կետ	23-րդ հոդվածի 2-րդ կետ
	11-րդ հոդվածի 3-րդ կետի «ա»	6-րդ հոդվածի 9-րդ կետը՝ նախապայմանագրային

85/577/ԵՏՀ հրահանգ	97/7/ԵՀ հրահանգ	Սույն հրահանգը
	ենթակետ	տեղեկությունների մասով ապացուցման բեռի համար, մյուս դեպքերում՝ -
	11-րդ հոդվածի 3-րդ կետի «բ» ենթակետ	24-րդ հոդվածի 1-ին կետ
	11-րդ հոդվածի 4-րդ կետ	-
	12-րդ հոդվածի 1-ին կետ	25-րդ հոդված
	12-րդ հոդվածի 2-րդ կետ	-
	13 հոդված	3-րդ հոդվածի 2-րդ կետ
	14-րդ հոդված	4-րդ հոդված
	15-րդ հոդվածի 1-ին կետ	28-րդ հոդվածի 1-ին կետ
	15-րդ հոդվածի 2-րդ կետ	28-րդ հոդվածի 1-ին կետ
	15-րդ հոդվածի 3-րդ կետ	28-րդ հոդվածի 1-ին կետ
	15-րդ հոդվածի 4-րդ կետ	30-րդ հոդված
	16-րդ հոդված	26-րդ հոդված
	17-րդ հոդված	-
	18-րդ հոդված	34-րդ հոդված
	19-րդ հոդված	35-րդ հոդված
5-րդ հոդվածի 1-ին կետ		9-րդ եւ 11-րդ հոդվածներ
5-րդ հոդվածի 2-րդ կետ		12-րդ հոդված
6-րդ հոդված		25-րդ հոդված
7-րդ հոդված		13-րդ, 14-րդ եւ 15-րդ հոդվածներ
8-րդ հոդված		4-րդ հոդված

«Սպառողների պաշտպանության մասին օրենքների կատարման համար պատասխանատու ներպետական մարմինների միջեւ համագործակցության մասին» Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2004 թվականի հոկտեմբերի 27-ի թիվ 2006/2004 կանոնակարգի (ԵՀ) (Սպառողների պաշտպանության հարցերով համագործակցության մասին կանոնակարգ) հավելված[1]	Անհրաժեշտ է մեկնաբանել որպես հղում հետեւյալին՝
2-րդ եւ 11-րդ պարբերություններ	Սույն հրահանգը
[1]ՊՏ L 364, 9.12.2004թ., էջ 1:	